ԱՄ ՓԱՐԹՆԸՐԶ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ
Փետրվար 2014

# ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն

Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագիր

ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի

Բովանդակություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ ... 5

1 ՆԱԽԱԲԱՆ ... 11

1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ... 11

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ ... 11

2 ՌԵՍՊՈՆԴԵՆՏՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ... 18

3 ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ... 23

3.1 ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ... 24

3.1.1 **Տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին** ... 24

3.1.2 **Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները** ... 25

3.1.3 **Տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակների մասին** ... 27

3.1.4 **Տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին** ... 29

3.1.5 **Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասին** ... 30

*3.1.5.1 Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետի մասին ... 30*

*3.1.5.2 Տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր մասնակիցների մասին ... 32*

*3.1.5.3 Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին վճարող սուբյեկտների մասին ... 33*

*3.1.5.4 Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային վճարների չափի մասին ... 35*

*3.1.5.5 Տեղեկացվածությունը անհատական կենսաթոշակային հաշիվների մասին ... 37*

*3.1.5.6 Տեղեկացվածությունը Կենտրոնական Դեպոզիտարիայի դերակատարության մասին ... 38*

*3.1.5.7 Տեղեկացվածությունը կենսաթոշակային խնայողությունների կառավարիչների մասին ... 40*

*3.1.5.8 Տեղեկացվածությունը կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու մասին ... 41*

*3.1.5.9 Տեղեկացվածությունը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ չընտրելու հետեւանքների մասին ... 43*

*3.1.5.10 Տեղեկացվածությունը կենսաթոշակային խնայողությունների ժառանգման մասին ... 44*

*3.1.5.11 Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդը/ֆոնդի կառավարիչին փոխելու հնարավորության մասին ... 45*

*3.1.5.12 Տեղեկացվածությունը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունների անվտանգության մասին ... 46*

*3.1.5.13 Տեղեկացվածությունը մասնակիցների՝ իրենց խնայողությունների հաշվին կատարված ներդրումներից հավելյալ եկամուտ ստանալու հնարավորության մասին ... 47*

3.1.6 **Տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի մասին** ... 48

*3.1.6.1 Տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետի մասին ... 48*

*3.1.6.2 Տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի կամավոր մասնակիցների մասին ... 49*

*3.1.6.3 Տեղեկացվածությունը կամավոր կենսաթոշակային համակարգին վճարող սուբյեկտների մասին ... 50*

*3.1.6.4 Տեղեկացվածությունը կամավոր կուտակային վճարների չափի մասին ... 51*

*3.1.6.5 Տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային ծառայություններ մատուցող կառույցների մասին 52*

*3.1.6.6 Տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների համար սահմանված հարկային արտոնության մասին ... 54*

3.2 ՌԵՍՊՈՆԴԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ... 54

3.2.1 **Վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ** ... 55

3.2.2 **Վերաբերմունքը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների նկատմամբ** ... 56

3.2.3 **Վերաբերմունքը կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր կիրառման նկատմամբ** ... 58

3.2.4 **Վերաբերմունքը կուտակային կենսաթոշակային համակարգն առանձին տարիքային խմբի համար պարտադիր սահմանելու նկատմամբ** ... 59

3.2.5 Վերաբերմունքը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին վճարում կատարողների նկատմամբ ... 61
3.2.6 Վերաբերմունքը պարտադիր կուտակային վճարների չափի վերաբերյալ ... 62
3.2.7 Վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ ... 63
3.2.8 Ռեսպոնդենտների՝ կենսաթոշակային ֆոնդում մասնակիցների ներդրման ընկալումը ... 66
3.2.9 Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ ունեցած վստահությունը ... 67
3.2.10 Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին/ֆոնդը փոխելու հնարավորությանը ... 68
3.2.11 Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունները չվտանգվելու հանգամանքին ... 69
3.2.12 Վերաբերմունքը մասնակիցների խնայողություններից կատարված ներդրումներից հավելյալ եկամուտի ստացման հանգամանքին ... 70

4 Սոցիալական Ծառայությունների Համակարգի Բարեփոխումներ. Տեղեկացվածություն եվ Վերաբերմունք ... 72

4.1 Տեղեկացվածությունը Սոցիալական Ծառայությունների Համակարգի Բարեփոխումների Մասին ... 72
4.1.1 Տեղեկացվածության մակարդակը ... 72
4.1.2 Սոցիալական ծառայությունների բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները ... 73
4.2 Ռեսպոնդենտների՝ ՀՍԾ Կենտրոններից Ստացած Առաջին Տպավորությունները ... 74
4.3 Սպասումներ եվ Ակնկալիքներ ՀՍԾ Կենտրոնների Գործունեությունից ... 75

5 Ամփոփում ... 77

## Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1 - Հետազոտության տվյալների վստահության մակարդակի ցուցանիշները ... 13
Աղյուսակ 2 - Ընտրանքի բաշխումն ըստ քաղաքային եւ գյուղական բնակչության ... 13
Աղյուսակ 3 - Երեւանի ընտրանքի բաշխումն ըստ վարչական շրջանների ... 13
Աղյուսակ 4 - Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի համայնքների ... 14
Աղյուսակ 5 - Հարցազրուցավարների այցերի արդյունքը ... 16
Աղյուսակ 6 - Հետազոտությանը մասնակցած ռեսպոնդենտների կրթական մակարդակի համեմատությունը Հայաստանի ցուցանիշների հետ ... 20
Աղյուսակ 7 - Ռեսպոնդենտների զբաղվածության կարգավիճակի եւ հեռուստատեսության՝ որպես տեղեկատվության աղբյուրի կապը ... 25
Աղյուսակ 8 - Կենսաթոշակային եւ սոցիալական ծառայությունների համակարգերի բարեփոխումների մասին տեղեկացվածության եւ վերաբերմունքի ելակետային ցուցանիշները ... 77

## Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1 - Ռեսպոնդենտների բաշխումն ըստ սեռի ... 18
Գծապատկեր 2 - Ռեսպոնդենտների բաշխումն ըստ տարիքի ... 18
Գծապատկեր 3 - Ռեսպոնդենտների բաշխումն ըստ կրթական մակարդակի ... 19
Գծապատկեր 4 - Ռեսպոնդենտների բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի ... 21
Գծապատկեր 5 - Ռեսպոնդենտների թվում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցները ... 22
Գծապատկեր 6 - Տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին ... 24
Գծապատկեր 7 - Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները ... 26
Գծապատկեր 8 - Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի ներդրման նպատակների մասին ... 27
Գծապատկեր 9 - Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների մասին ... 29
Գծապատկեր 10 - Տեղեկացվածությունը պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին ... 31
Գծապատկեր 11 - Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի պարտադիր մասնակիցների մասին ... 32
Գծապատկեր 12 - Տեղեկացվածությունը պարտադիր ԿԿ համակարգին վճարող սուբյեկտների մասին ... 34

Գծապատկեր 13 - Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային վճարների չափի մասին ........ 35
Գծապատկեր 14 - Տեղեկացվածությունը անհատական կենսաթոշակային հաշիվների մասին........ 37
Գծապատկեր 15 - Տեղեկացվածությունը Կենտրոնական դեպոզիտարիայի՝ որպես անհատական կենսաթոշակային հաշիվները վարող կառույցի մասին........ 39
Գծապատկեր 16 - Տեղեկացվածությունը կենսաթոշակային խնայողությունների կառավարիչների մասին........ 40
Գծապատկեր 17 - Տեղեկացվածությունը կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու մասին........ 41
Գծապատկեր 18 - Տեղեկացվածությունը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ չընտրելու հետեւանքների մասին ........ 43
Գծապատկեր 19 - Տեղեկացվածությունը կենսաթոշակային խնայողությունների ժառանգման մասին ........ 44
Գծապատկեր 20 - Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդը/ֆոնդի կառավարիչին փոխելու հնարավորության մասին........ 45
Գծապատկեր 21 - Տեղեկացվածությունը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունների անվտանգության մասին........ 46
Գծապատկեր 22 - Տեղեկացվածությունը մասնակիցների՝ իրենց խնայողությունների հաշվի կատարված ներդրումներից հավելյալ եկամուտ ստանալու հնարավորության մասին ........ 47
Գծապատկեր 23 - Տեղեկացվածությունը կամավոր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին ........ 48
Գծապատկեր 24 - Տեղեկացվածությունը կամավոր ԿԿ համակարգի մասնակիցների մասին ........ 49
Գծապատկեր 25 - Տեղեկացվածությունը կամավոր ԿԿ համակարգին վճարող սուբյեկտների մասին ........ 50
Գծապատկեր 26 - Տեղեկացվածությունը կամավոր կուտակային վճարների չափի մասին........ 51
Գծապատկեր 27 - Տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային ծառայություններ մատուցող կառույցների մասին ........ 52
Գծապատկեր 28 - Տեղեկացվածությունը կամավոր ԿԿ համակարգի մասնակիցների համար սահմանված հարկային արտոնության մասին........ 54
Գծապատկեր 29 - Վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ........ 55
Գծապատկեր 30 - Վերաբերմունքը ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների նկատմամբ ........ 56
Գծապատկեր 31 - Վերաբերմունքը ԿԿ համակարգի պարտադիր կիրառման նկատմամբ........ 58
Գծապատկեր 32 - Վերաբերմունքը ԿԿ համակարգը առանձին տարիքային խմբի համար պարտադիր սահմանելու նկատմամբ ........ 59
Գծապատկեր 33 - Վերաբերմունքը պարտադիր ԿԿ համակարգին վճարում կատարողների նկատմամբ ........ 61
Գծապատկեր 34 - Վերաբերմունքը պարտադիր կուտակային վճարների չափի վերաբերյալ........ 62
Գծապատկեր 35 - Վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ ........ 63
Գծապատկեր 36 - Վերաբերմունքը հատուկ համակարգչային ծրագրի օգնությամբ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ կամ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ ........ 65
Գծապատկեր 37 - Ռեսպոնդենտների՝ կենսաթոշակային ֆոնդում մասնակիցների ներդրման ընկալումը........ 66
Գծապատկեր 38 - Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ ունեցած վստահությունը ........ 67
Գծապատկեր 39 - Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին/ֆոնդը փոխելու հնարավորությանը........ 68
Գծապատկեր 40 - Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունները չվտանգվելու հանգամանքին ........ 69
Գծապատկեր 41 - Վերաբերմունքը մասնակիցների խնայողություններից կատարված ներդրումներից հավելյալ եկամտի ստացման հանգամանքին........ 70
Գծապատկեր 42 - Սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների մասին տեղեկացվածության մակարդակը ........ 72
Գծապատկեր 43 - Սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները ........ 73
Գծապատկեր 44 - Կոտայքի մարզի ռեսպոնդենտների սպասումները եւ ակնկալիքները ՀՍԾ կենտրոնների գործունեությունից ........ 75

## Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ԱՄՆ ՄԶԳ | ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն |
| ԱՎԾ | Ազգային Վիճակագրական Ծառայություն |
| ԿԲԻԾ | Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագիր |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՍԾ կենտրոն | Համալիր սոցիալական ծառայությունների կենտրոն |
| ՏՏ | Տնային տնտեսություն |

**Բացատրություններ**

| | |
|---|---|
| Խորհրդատու | ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի |
| Հետազոտություն | Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագրի գործողությունների առաջընթացի գնահատման համար մոնիտորինգի եւ գնահատման ցուցիչների մշակման ելակետային հետազոտություն |
| Պատվիրատու | Քեմոնիքս Ինթերնեյշնըլ |

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

1. **Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագրի գործողությունների առաջընթացի գնահատման համար մոնիտորինգի եւ գնահատման ցուցիչների մշակման ելակետային հետազոտությունն** իրականացվել է **Քեմոնիքս Ինթերնեյշնըլի** պատվերով: Վերջինս իրականացնում է **ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության** կողմից ֆինանսավորվող **Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագիրը** (**ԿԲԻԾ**): Հետազոտությունն իրականացրել է «**ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի**» **ՍՊԸ**-նը՝ 2013**թ. դեկտեմբեր**-2014**թ. փետրվար** ժամանակահատվածում:

Հետազոտությունը նպատակ ունի արձանագրել **ԿԲԻԾ-ի մեկնարկային փուլում կենսաթոշակային բարեփոխումների**, **մասնավորապես՝ կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային տեղեկացվածության եւ վերաբերմունքի մակարդակը**, **ինչպես նաեւ սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումներից տեղեկացվածության եւ սպասումների հարցերը**:

Ելակետային հետազոտության թիրախներից մեկն է պարզել **կանանց շրջանում** կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության եւ ընկալման հարցերը: Այդ իսկ պատճառով հետազոտությամբ ստացված վիճակագրական տվյալներից առանձնացվել են միայն կանանց կողմից տրված պատասխանները եւս:

Ելակետային հետազոտությունն իրականացվել է **տնային տնտեսությունների** շրջանում հարցազրույցներ անցկացնելու միջոցով: Ընտրանքի չափը սահմանել է պատվիրատուն, որը կազմում է 1,200 **տնային տնտեսություն**: Հարցումները եւս անցկացվել են պատվիրատուի կողմից սահմանված տարածքներում՝ **Երեւան համայնքում** եւ **Արարատի** եւ **Կոտայքի մարզերում**: Յուրաքանչյուր առանձին տարածքում անցկացվել են 400-**ական հարցազրույցներ**: Յուրաքանչյուր մարզում ընտրանքը բաժանվել է քաղաքային եւ գյուղական բնակչության միջեւ՝ համամասնորեն: Արդյունքում 731 **ռեսպոնդենտներ հարցվել են քաղաքներում**, 469 **ռեսպոնդենտներ՝ գյուղերում**:

Հարցազրույցներն իրականացվել են **դեմ առ դեմ՝** ստանդարտացված **հարցաշարի** կիրառմամբ՝ 12 հարցազրուցավարների կողմից: Տնային տնտեսություններում ռեսպոնդենտի ընտրության **առաջին չափորոշիչը եղել է տարիքը**: Պատվիրատուի պահանջով հարցազրույցներն անցկացվել են հետազոտության պահին 18-62 **տարեկան անձանց շրջանում**: Ընտրության երկրորդ գործիքը եղել է մեթոդը, որի միջոցով ապահովվել է ընտրանքի ներկայացուցչականությունը եւ պատահականությունը: Խոսքը գնում է **վերջին ծննդյան մեթոդով ռեսպոնդենտի ընտրության մասին**: Այսպիսով, առանձին SS-ում հարցազրույցի համար ռեսպոնդենտն ընտրվել է 18-62 տարեկան անդամների կազմից, ում **ծննդյան օրը նախորդում է եւ ամենամոտն է գտնվում հարցազրույցի անցկացման օրվան**: 1,200 արդյունավետ հարցազրույցներ իրականացնելու համար **Խորհրդատուն կոնտակտ է ունեցել** 3,308 **տնային տնտեսությունների հետ**: Հետազոտությանը մասնակցելուց **հրաժարման դեպքերի տեսակարար կշիռը կազմել է** 21%: Հրաժարման ամենաբարձր մակարդակը գրանցվել է ք.Երեւանում՝ 29%:

Հետազոտության արդյունքներով, ռեսպոնդենտներն ըստ սեռի բաշխվել են տղամարդիկ՝ 37% եւ կանայք՝ 63% հարաբերակցությամբ: Ռեսպոնդենտների տարիքային կազմը գրեթե կրկնում է Հայաստանի բնակչության տարիքային կազմի ցուցանիշները: Հետազոտության արդյունքները ներկայացվել են նաեւ 18-24, 25-40 եւ 41-62 տարիքային խմբերով: Ռեսպոնդենտների կրթական մակարդակը եւս շատ նման է Հայաստանի բնակչության կրթական մակարդակի ցուցանիշներին:

Ռեսպոնդենտների շրջանում հետազոտության պահին որեւէ կարգի աշխատանք ունեցողների մասնաբաժինը կազմել է 46%, այդ թվում գրանցված աշխատանք ունեցողները՝ 29%: Ըստ զբաղվածության կարգավիճակի մյուս խոշոր խմբերը կազմել են աշխատանք փնտրողները (գործազուրկները)՝ 15% եւ տնային տնտես(ուհի)ները՝ 28%:

Հետազոտության պահին ռեսպոնդենտների 15%-ը **հանդիսանում էին պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի** (**ԿԿ համակարգ**) **մասնակիցներ**: Նրանց պատասխանները, որպես պարտադիր ԿԿ համակարգի ուղղակի շահառուների, պարտադիր ԿԿ համակարգի մասին տեղեկացվածության վերլուծության ժամանակ ներկայացված են առանձին:

2. **ԿԿ համակարգն ունի բազմաթիվ պայմաններ եւ դրանցից յուրաքանչյուրը հանդիսանում է մարդկանց տեղեկացվածության եւ վերաբերմունքի առանձին օբյեկտ**: Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ շատ քիչ կարելի է հանդիպել մարդկանց, ովքեր ԿԿ համակարգի մասին ունեն համապարփակ տեղեկացվածություն: ԿԿ համակարգի որոշ պայմանների մասին, ինչպես օրինակ՝ համակարգի ներդրման ժամկետներ, մասնակիցներ, կուտակային վճարների չափեր, տեղեկացվածությունը համեմատաբար ավելի բարձր է, քան օրինակ՝ անհատական կենսաթոշակային հաշիվների, կենսաթոշակային ֆոնդերի եւ ֆոնդերի կառավարիչների մասին տեղեկացվածությունը: Արձանագրում ենք, որ **կենսաթոշակային բարեփոխումների մասին ռեսպոնդենտների տեղեկացվածությունը ֆրագմենտավորված է**:

Նախքան հետազոտության կարեւոր արդյունքներին անդրադառնալը պետք է արձանագրենք, որ **կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության եւ վերաբերմունքի ցուցանիշները պայմանավորված մարդկանց սեռով՝ առանձնապես շատ չեն տարբերվում**: **Տղամարդկանց եւ կանանց տեղեկացվածության մակարդակները հիմնականում նույնն են կամ շատ մոտ են**: Թերեւս բացառություն կարելի է անել վերաբերմունքի որոշ դրսեւորումներում, որտեղ տղամարդիկ իրենց դժգոհություններում եւ քննադատական կարծիքներում ավելի արմատական են տրամադրված: Այս առումով պետք է նկատենք, որ **կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության եւ վերաբերմունքի ցուցանիշները նկատելիորեն տարբերվում են ըստ տարիքի**, **մարզերի եւ բնակավայրի տիպի** (**քաղաք եւ գյուղ**):

**Այն, որ Հայաստանում իրականացվում են կենսաթոշակային բարեփոխումներ՝ տեղյակ են ռեսպոնդենտների** 86%-**ը**: Եթե այդ ցուցանիշը համեմատենք 2010թ.-ի համանման մի հետազոտությամբ պարզված ցուցանիշի հետ, ապա այս հարցում տեղեկացվածության աճը ակնհայտ է. 2010թ.-ին նշված ցուցանիշը կազմում էր 36%: Սակայն կենսաթոշակային բարեփոխումներից անտեղյակ մարդկանց կազմը հետազոտելիս նկատվել է մտահոգիչ հանգամանք: Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների մեջ եւս կան այնպիսինները, որոնք ոչինչ չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին: Այդպիսիք կազմում են 10%:

Կենսաթոշակային բարեփոխումների մասին երիտասարդները (18-24 տ) ավելի քիչ են լսել, քան ավելի բարձր տարիքային խմբի մարդիկ: Կարելի է ենթադրել, որ կենսաթոշակների թեմայի հրատապությունը մարդկանց մոտ աճում է նրանց տարիքին զուգահեռ: **Երիտասարդների մոտ կա մտայնություն**, **որ կենսաթոշակների թեման անմիջապես իրենց վերաբերվելու է տասնյակ տարիներ անց**, **ինչի պատճառով էլ դրա նկատմամբ հետաքրքրությունը համեմատաբար նվազ է**:

Ռեսպոնդենտների 26%-ը չգիտի (դժվարացել են պատասխանել), թե ինչ նպատակ են հետապնդում կենսաթոշակային բարեփոխումները: Մնացած մասը տարբեր կերպ են ընկալում կենսաթոշակային

բարեփոխումների նպատակը: «Դրական» նպատակների մասին՝ այն, որ բարեփոխումները միտված են բարեկեցիկ ծերության ապահովմանը, մարդկանց աշխատավարձի եւ կենսաթոշակի միջեւ փոխկապակցության հաստատմանը կամ պարզապես ունեն դրական սպասումներ, հայտնել են ռեսպոնդենտների 21%-ը: Ռեսպոնդենտների 39%-ը նշել են բնույթով «բացասական» նպատակներ (ժողովրդի թալան եւ կողոպուտ, լավ բան չեն սպասում եւ չեն վստահում իշխանություններին, անիմաստ եւ անհեթեթ բարեփոխումներ), կամ էլ նշել են, որ կենսաթոշակային բարեփոխումները բխում է ոչ թե իրենց շահերից, այլ ուրիշների (պետության համար փող են հայթայթում, ոմանք բիզնես են անում):

**Ռեսպոնդենտների միայն** 10%-**ն է տեղյակ**, **որ ԿԿ համակարգն ունի եւ պարտադիր**, **եւ կամավոր բաղադրիչներ**: Այս հարցում մարդկանց տեղեկացվածությունը մնացել է 2010թ.-ի մակարդակին, ինչը պետք է մտահոգության տեղիք տա: Ռեսպոնդենտների հիմնական մասը (48%) մտածում է, որ ԿԿ համակարգը ներդրվում է միայն պարտադիր սկզբունքով, իսկ մեկ այլ մեծ խումբ (22%) էլ պարզապես անտեղյակ է ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների մասին: ԿԿ համակարգի պարտադիր կիրառության սկզբունքը բարեփոխումների այն պայմաններից է, որը հաճախ թյուրիմացությունների տեղիք է տալիս: Թե **ովքեր են հանդիսանում պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցներ՝ լիարժեք տեղեկացվածություն ունեն ռեսպոնդենտների միայն** 8%-**ը**: Այն ռեսպոնդենտները, ովքեր տեղյակ չեն, թե կոնկրետ ովքեր են պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցները, կազմում են բարեփոխումներից դժգոհողների հիմնական խումբը: Նրանց դժգոհությունը կառուցված է հետեւյալ թյուր կարծիքի վրա. - ***եթե մարդը չունի աշխատանք եւ եկամուտի աղբյուր, ինչու՞ եւ որտեղի՞ց պետք է կատարի կուտակային վճար***: ԿԿ համակարգի պարտադիր բաղադրիչի, եւ ընդհանրապես՝ կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ հակազդեցությունը մի փոքր կարող է նվազել, թե ռեսպոնդենտները հստակ գիտակցեն, որ պարտադիր կուտակային վճարներ անելու են միայն վարձու աշխատանք եւ կանոնավոր եկամուտ ունեցող անձինք:

3. **Պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետը ճշգրիտ գիտեն ռեսպոնդենտների** 44%-**ը**: Առաջին հայացքից սա կարող է թվալ լավ ցուցանիշ, եթե հաշվի առնենք, որ պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցները կազմում են ռեսպոնդենտների ընդամենը 15%-ը: Սակայն երբ դիտարկում ենք միայն այդ խումբն առանձին, ապա պարզվում է, որ նրանց ընդամենը 60%-ն է տեղյակ պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին: Դա արդեն վատ ցուցանիշ է, քանի որ անուղղակիորեն կարելի է ենթադրել, որ պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների 40%-ը այդ համակարգի ներդրման պահին անգամ չգիտեն, որ իրենք արդեն դարձել են նոր կենսաթոշակային համակարգի մասնակից:

**Ռեսպոնդենտների ընդամենը** 16%-**ն է տեղյակ**, **որ պարտադիր ԿԿ համակարգի մասնակցի հետ միասին վճարումներ է անելու նաեւ պետությունը**: 2010թ.-ի համեմատ այդ ցուցանիշն աճել է 4 անգամ (2010թ.-ին՝ 4%), սակայն դա բավարար չէ, որպեսզի օբյեկտիվորեն արժեւորվի պետության պատասխանատվությունը եւ մասնակցությունը կենսաթոշակային բարեփոխումներին: Այս հարցում պատկերը մտահոգիչ է նաեւ պարտադիր ԿԿ համակարգի մասնակից ռեսպոնդենտների դեպքում: Այստեղ տեղեկացվածությունը հասնում է մինչեւ 24%-ի: Սակայն 43%-ը մտածում է, թե իր ապագա կենսաթոշակի գումարը միայն ինքն է կուտակելու: Անտեղյակության այսպիսի մասշտաբները ի չիք են դարձնում կենսաթոշակային բարեփոխումներում պետության գլխավոր խաղաթղթերից մեկը:

**Պարտադիր կուտակային վճարման չափի** մասին տեղեկությունը պարտադիր ԿԿ համակարգի ամենաբարդ պայմաններից մեկն է: Այն բարդ է անգամ այն մարդկանց համար, ովքեր գիտեն եւ՛ ԿԿ համակարգի մասնակցի, եւ՛ պետության վճարումների մասին: Բարդությունը կայանում է նրանում,

որ **կա բազային եկամտի շեմ**՝ 500,000 **դրամ**, **որից ներքեւ եւ վերեւ կուտակային վճարների չափերի հաշվարկման բանաձեւերը տարբեր են**: Հաշվարկին տիրապետում են բոլոր ռեսպոնդենտների 4%-ը եւ պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների 9%-ը: Ռեսպոնդենտները ծանոթ չեն «բազային եկամուտ» ձեւակերպմանը: Դրա փոխարեն նրանք օգտագործում են «աշխատավարձ» բառը, որի ներքո հասկանում են այն գումարը, որը նրանք փաստացի (եկամտային հարկը պահելուց հետո) ստանում են ամեն ամիս: Ռեսպոնդենտների մոտ «բազային եկամտի» եւ «զուտ աշխատավարձի» նույնացման (նույնական ընկալման) արդյունքում այսօր առաջացել է մի հակափաստարկ, որը լայնորեն օգտագործվում է կենսաթոշակային բարեփոխումների դեմ: Խոսքը գնում է «աշխատավարձի 5%» ձեւակերպման մասին: **Ռեսպոնդենտների ճնշող մեծամասնությունն «աշխատավարձ» ասելով նկատի ունի այն գումարը**, **որն իրենք փաստացի ստանում են՝ արդեն հարկերը պահելուց հետո**: Սակայն **իրականում այդ** 5%-**ը պետք է հաշվարկվի այսպես կոչված «բազային եկամտի» նկատմամբ**, **որը ներառում է նաեւ եկամտային հարկը**: Այդ դեպքում **կուտակային վճարի մեծությունը ստացվում է պարտադիր կուտակողի զուտ աշխատավարձի** 5%-**ից ավելին**: Այս հանգամանքը բարեփոխումների ընդդիմախոսների կողմից օգտագործվում է հետեւյալ մեկնաբանմամբ. *պարտադիր կուտակային վճարի չափը ոչ թե 5% է, այլ իրականում ավելի բարձր: Եվ պետությունը, կուտակային վճարի չափը ներկայացնելով որպես 5%, իրականում մարդկանց գցում է թյուրիմացության մեջ:*

Պարտադիր ԿԿ համակարգի մյուս պայմանների մասին ռեսպոնդենտների տեղեկացվածությունն առանձնապես բարձր չի: Անհատական կենսաթոշակային հաշիվների մասին տեղյակ են ռեսպոնդենտների 5%-ը, Կենտրոնական Դեպոզիտարիայի գործառույթի մասին՝ 2%-ը, կենսաթոշակային ֆոնդի՝ որպես անձանց կենսաթոշակային խնայողությունները կառավարողի գործառույթի մասին՝ 8%-ը, կենսաթոշակային հաշիվ բացելու, ֆոնդ եւ ֆոնդի կառավարիչ ընտրելու ձեւի մասին՝ 1.4%-ը: Ընդհանրապես, **անհատական կենսաթոշակային հաշիվների**, **կենսաթոշակային ֆոնդերի եւ ֆոնդերի կառավարիչների մասին խոսելիս ռեսպոնդենտների մոտ առկա է որոշակի շփոթություն**: Ռեսպոնդենտները լավ չեն պատկերացնում դրանց միջեւ եղած տարբերությունները:

4. Կամավոր ԿԿ համակարգը Հայաստանում գործարկվել է 01.01.2011թ.-ին: Սակայն ռեսպոնդենտների պատասխաններից **կարելի է տպավորություն ստանալ**, **որ կամավոր ԿԿ համակարգի մասին մարդկանց տեղեկացվածությունը ժամանակի ընթացքում ոչ թե աճում է**, **այլ նվազում**: Կամավոր ԿԿ համակարգի մասին տեղյակ ռեսպոնդենտները կազմում են ընդհանուրի 16%-ը, այն դեպքում, երբ նույն ցուցանիշը 2010թ.-ին կազմում էր 24%:

   **Կամավոր ԿԿ համակարգի ներդրման ժամկետներից տեղյակ են ռեսպոնդենտների ընդամենը** 2%-**ը**: Սա խոսուն ցուցանիշ է եւ վկայում է այն մասին, որ **Հայաստանում կամավոր ԿԿ համակարգը այդպես էլ չի գտել իր շահառուին**:

5. ԿԿ համակարգի նկատմամբ **վերաբերմունքի հարցերը** տրվել են բոլոր ռեսպոնդենտներին, անկախ կենսաթոշակային բարեփոխումների մասին նրանց տեղեկացվածության մակարդակից: Ռեսպոնդենտների կազմում քիչ չեն մարդիկ, ովքեր ընդհանրապես ծանոթ չեն կենսաթոշակային բարեփոխումների այս կամ այն պայմաններից: Նման դեպքերը հաշվի առնելով, նրանց վերաբերմունքը ստանալու համար Խորհրդատուն կատարել է 3 քայլ. 1) նախապես ռեսպոնդենտին տրվել է տեղեկություն կենսաթոշակային բարեփոխումների եւ ԿԿ համակարգի կոնկրետ պայմանի վերաբերյալ, 2) ռեսպոնդենտին տրվել է հարց, թե ինչպես է ինքը վերաբերվում ԿԿ համակարգի մասին հենց նոր իրեն հայտնի դարձած տեղեկությանը, 3) եթե ռեսպոնդենտը հայտնել է

**բացասական** վերաբերմունք, ապա նրան տրվել է հարց, թե ինչու է այդպես կարծում: Դրական կամ չեզոք վերաբերմունքի դեպքում (օրինակ՝ «Ինձ համար միեւնույն է» կամ «Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել») ռեսպոնդենտներից իրենց դիրքորոշման վերաբերյալ բացատրություն չի պահանջվել: Այսպիսով, հետազոտության ընթացքում Խորհրդատուն առավելապես կենտրոնացել է կենսաթոշակային բարեփոխումներից մարդկանց դժգոհությունների վրա: Կենսաթոշակային բարեփոխումների եւ ԿԿ համակարգի նկատմամբ դժգոհության ավելի բարձր մակարդակ ունեցող պայմանները հետեւյալն են.

**Ռեսպոնդենտների** 63%-**ը կենսաթոշակային բարեփոխումները արդարացված չեն համարում**: Այս դիրքորոշումը հիմնականում բացատրվում է պետության եւ իշխանությունների նկատմամբ վստահության բացակայությամբ: Երկրորդ հակափաստարկն այն է, որ գործազրկության նման մասշտաբի պայմաններում եւ աշխատավարձերի ցածր մակարդակի պայմաններում ԿԿ համակարգի գործարկումը չի կարող արդարացնել իրեն: Ցածր աշխատավարձից կատարված կուտակումներով հնարավոր չի լինի հետագայում ապահովել բարձր թոշակ եւ բարեկեցիկ ծերություն:

**Ռեսպոնդենտների** 54%-**ը խելամիտ չեն համարում ԿԿ համակարգի կիրառության պարտադիր+կամավոր մոտեցումը**: Դժգոհողների մեծ մասը (69%) գտնում են, որ ԿԿ համակարգը պետք է լինի **միայն կամավոր** մասնակցության սկզբունքով: Այս ռեսպոնդենտների դիրքորոշումն այն է, որ եթե ԿԿ համակարգը այդքան լավն է եւ կան դրա ապացույցները, ապա պետք է թողնել, որ մարդիկ կամավոր միանան դրան: Պարտադրանքով մարդկանց համակարգին մասնակից դարձնելը առաջացնում է հակազդեցություն եւ էլ ավելի մեծացնում իշխանությունների նկատմամբ հանրության մեջ առկա անվստահությունը:

Այս համատեքստում, **ռեսպոնդենտների** 67%-**ը դեմ են պարտադիր բաղադրիչին**: Դժգոհողների հիմնական մասը գտնում են, որ յուրաքանչյուր մարդ պետք է ունենա ընտրության հնարավորություն: Օրենքի ուժով մարդկանց պարտադրել, որ նրանք անեն մի բան, որը չեն ցանկանում՝ զրկում է մարդկանց ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորությունից: Դա ոչ ոք չի կարող հանդուրժել:

**Ռեսպոնդենտների** 47%-**ը բացասաբար են վերաբերվում պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցներն ըստ տարիքի բաժանելու պայմանին**: Անկախ նրանից, թե ինչ վերաբերմունք ունեն ԿԿ համակարգի նկատմամբ (կողմ են, թե դեմ), այս խմբի ռեսպոնդենտները կարծում են, որ **օրենքը չպետք է խտրական վերաբերմունք ցույց տա մարդկանց՝ կախված նրանց տարիքից**: Կարծում են, որ եթե ԿԿ համակարգի պարտադիր բաղադրիչը այնուամենայնիվ գործելու է, ապա այն պետք է պարտադիր լինի բոլորի համար:

**Ռեսպոնդենտների** 32%-**ը բացասաբար են վերաբերվում նրան**, **որ պարտադիր ԿԿ համակարգին վճարում պետք է անեն անձինք եւ պետությունը**: Դժգոհողների 21%-ը գտնում են, որ կուտակում պետք է անի **միայն պետությունը**: Շատերը մտածում են, որ աշխատողներն իրենց աշխատավարձից պահվող եկամտահարկի մեջ (դրույքը՝ 24.4%) արդեն վճարել են սոցվճար եւ կարիք չկա աշխատողներից նոր գումար պահելու: Եվս 21%-ը չեն հավատում, որ պետությունը որեւէ գումար կվճարի պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների հաշիվներին: Նման մտայնությունը, անշուշտ անհիմն է, սակայն գալիս է իշխանությունների նկատմամբ վստահության իսպառ բացակայությունից:

**Ռեսպոնդենտների** 40%-**ը խելամիտ չեն պարտադիր կուտակային վճարների չափերը**: Դժգոհողների ամենամեծ խումբը գտնում է, որ պետությունը **պետք է պարտադիր ԿԿ համակարգի մասնակցի վճարմանը հավասար վճարում անի՝ անկախ աշխատավարձի մեծությունից**: Մասնակցի աշխատավարձի մեծությունից կախված պետության մասնակցության տարբեր չափերը եւս մեկ **խտրական վերաբերմունք է**՝ այս անգամ ամսական 500,000 դրամից ավելի աշխատավարձ ստացող անձանց նկատմամբ:

Չնայած կենսաթոշակային ֆոնդում իրենց ունեցած ներդրմանը, **ռեսպոնդենտների** 45%-**ը իրեն չի կարող համարել կենսաթոշակային ֆոնդի փայի սեփականատեր**: Այսպես կարծողների 21%-ը գտնում են, որ եթե մարդը չի կարող ոչ տնօրինել, ոչ էլ կառավարել իր «փայը», ապա ինչպե՞ս նա կարող է իրեն զգալ փայատեր: Փայատեր կարելի է զգալ/լինել այն սեփականության մեջ, որը գտնվում է սեփականատիրոջ, եւ ոչ թե նրա կառավարիչի տնօրինման ներքո:

**Ռեսպոնդենտների** 54%-**ը ապահովության եւ վստահության զգացում չունեն կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ**, քանի որ նրանց չեն նրանց չեն ճանաչում, նրանց հետ աշխատելու փորձ չունեն: Այս խմբի ռեսպոնդենտների 40%-ը չեն վստահում առհասարակ ոչ մեկին՝ ոչ իշխանություններին, ոչ նրանց ընտրած կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին, բանկերին, ինչպես նաեւ իրենց ընկերներին, հարազատներին: Շատերը հիշում են ԽՍՀՄ փլուզման պահին իրենց կամ իրենց ծնողների կորցրած ավանդները եւ խնայողությունները եւ այդ պատճառով սկզբունքորեն դեմ են իրենց խնայողությունները այլ անձանց մոտ կամ կազմակերպություններում պահելուն:

6. Ելակետային հետազոտության արդյունքների հիման **սոցիալական ծառայությունների բարեփոխումների** մասին ռեսպոնդենտների տեղեկացվածության մակարդակին գնահատական տալը շատ դժվար է: **Ռեսպոնդենտների** 20%-**ն է լսել, որ Հայաստանում ընթանում են սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումներ**: Այս ցուցանիշի բնորոշումը դժվար է, քանի որ. 1) ամեն մարդ չէ, որ ունի սոցիալական ծառայությունների համակարգի հետ շփման փորձ, 2) ամեն օր չէ, որ մարդիկ շփվում են սոցիալական ծառայությունների համակարգի հետ, 3) ամեն տնտեսություն (ընտանիք) չէ, որը տարվա մեջ գոնե մեկ անգամ առնչվում է սոցիալական ծառայությունների համակարգի հետ՝ պայմանավորված այդպիսի ծառայությունների օգտագործման կարիքի իսպառ բացակայությամբ:

Մյուս կողմից՝ Արարտի մարզում արձանագրվել է **ռեսպոնդենտների տեղեկացվածության համեմատաբար բարձր մակարդակ** (35%): Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման փորձնական փուլն անցկացվել է Արարատի մարզում: Առաջին Համալիր սոցիալական ծառայությունների (այսուհետ՝ ՀՍԾ) կենտրոնները բացվել են հենց Արարատի մարզում՝ 1-1.5 տարի ավելի առաջ, քան Երեւանում եւ Կոտայքում: Ուստի զարմանալի չէ եւ միանգամայն օրինաչափ է, որ Արարատի մարզի ռեսպոնդենտներն ունեն սոցիալական ծառայությունների բարեփոխումների մասին ավելի բարձր տեղեկացվածության մակարդակ:

Ռեսպոնդենտների շրջանում Համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնների (ՀՍԾԿ) հետ առնչությունները եւ տեղեկությունները այնքան քիչ են (46 ռեսպոնդենտ՝ 1,200-ից), որ նրանց պատասխանները չեն կարող ունենալ վիճակագրական նշանակություն: Այնուամենայնիվ, ՀՍԾԿ-ների գործունեության հետ կապված ստացված սակավաթիվ կարծիքների մեջ **գերակշռում են դրական արձագանքները**: Մարդիկ նշում են, որ բարձրացել է սպասարկման արագությունը, սպասարկման սրահները նորոգված են եւ կահավորված, բարձրացել է սպասարկման որակը:

# 1 ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը «**Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագրի գործողությունների առաջընթացի գնահատման համար մոնիտորինգի եւ գնահատման ցուցիչների մշակման ելակետային հետազոտություն**» աշխատանքի (այսուհետ՝ հետազոտություն) հաշվետվությունն է: Հետազոտությունն իրականացվել է **Քեմոնիքս Ինթերնեյշնըլի** (այսուհետ՝ Պատվիրատու) պատվերով: Վերջինս իրականացնում է **ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության** կողմից ֆինանսավորվող **Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագիրը**: Հետազոտությունն իրականացրել է «**ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի**» **ՍՊԸ**-նը (այսուհետ՝ Խորհրդատու)՝ 2013**թ. դեկտեմբեր**-2014**թ. փետրվար** ժամանակահատվածում:

## 1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախաձեռնելով սույն հետազոտության իրականացումը, պատվիրատուն նպատակ ունի արձանագրել **ԿԲԻԾ-ի մեկնարկային փուլում կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային տեղեկացվածության եւ վերաբերմունքի մակարդակը**, **ինչպես նաեւ սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումներից տեղեկացվածության եւ սպասումների հարցերը**: Մասնավորապես, սույն հետազոտությունը ելակետային սոցիոլոգիական-վիճակագրական տվյալներ է ներկայացնում հետեւյալ կոնկրետ հարցերի վերաբերյալ.

- հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ,
- հանրության տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ,
- հանրության վերաբերմունքը կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ,
- հանրության տեղեկացվածությունը սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների վերաբերյալ:

Հետազոտության թիրախներից մեկն է պարզել **կանանց շրջանում** կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության եւ ընկալման հարցերը: Այդ իսկ պատճառով հետազոտությամբ ստացված վիճակագրական տվյալներից առանձնացվել են միայն կանանց կողմից տրված պատասխանները:

Թվարկված հարցերի վերաբերյալ ստացված սոցիոլոգիական-վճակագրական ելակետային տվյալները ԿԲԻԾ-ին թույլ կտան **իրականացնել կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ ավելի նպատակային իրազեկում**, **թիրախում ունենալով կանանց շրջանում տեղեկացվածության բարձրացման նպատակը**:

## 1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

Ելակետային հետազոտությունն իրականացվել է **տնային տնտեսությունների** շրջանում հարցումներ անցկացնելու միջոցով: Ընտրանքի չափը սահմանել է պատվիրատուն, որը կազմում է 1,200 **տնային տնտեսություն**: Հարցումները եւս անցկացվել են պատվիրատուի կողմից սահմանված տարածքներում՝ **Երեւան համայնքում** եւ **Արարատի** եւ **Կոտայքի մարզերում**: Յուրաքանչյուր առանձին տարածքում անցկացվել են 400-**ական հարցումներ**:

Տարածքներից յուրաքանչյուրի ընտրության հիմքում ընկած են որոշակի նկատառումներ.

ա) Երեւան համայնքը համարվում է Հայաստանի տնտեսական, քաղաքական եւ սոցիալական խոշորագույն կենտրոնը, որտեղ կենտրոնացած են կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի շահառուների մեծ մասը:

բ) Արարատի մարզի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ մարզը հանդիսանում է Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար փորձնական ծրագրի իրականացման միակ վայրը: Արարատի մարզում գերակշռում է գյուղական բնակչությունը:

գ) Կոտայքի մարզը Արարատի մարզից տարբերվում է նրանով, որ այստեղ ընդամենը վերջերս է սկսվել ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը: Այս առումով Կոտայքի մարզը նման է Հայաստանի մյուս մարզերին՝ բացառությամբ Արարատի մարզի: Կոտայքի մարզում գերակշռում է քաղաքային բնակչությունը:

Հետազոտության համար ընտրված տարածքների նշված կազմությունն ընդհանուր առմամբ կարող է բնորոշել Հայաստանն ամբողջությամբ, քանի որ մոտավորապես պահպանված են Հայաստանի բնակչության թվաքանակում Երեւան/մարզեր եւ քաղաք/գյուղ հարաբերակցությունները: Այնուամենայնիվ թյուրըմբռնումներից խուսափելու համար Խորհրդատուն **ստացված բոլոր տվյալները ներկայացրել է յուրաքանչյուր տարածքի համար եւ առանձին**, **եւ ընդհանուր կարգով**:

Հետազոտության իրականացման նպատակով իրականացվել են հետեւյալ քայլերը:

*Քայլ 1* ▶ *Հետազոտության թիրախի սահմանում*

Հետազոտության թիրախը կազմել են տնային տնտեսությունները (այսուհետ՝ ՏՏ): ՏՏ-ի բնորոշման համար Խորհրդատուն հիմք է ընդունել ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության (այսուհետ՝ ԱՎԾ) կողմից ՏՏ-ի համար կիրառվող բնորոշումը, համաձայն որի **տնային տնտեսություն է համարվում՝**

**Առանձին բնակելի միավորումը, կամ դրա մի մասում բնակվող անձը, որն ինքն իրեն ապահովում է կենսականորեն անհրաժեշտ ամեն ինչով և ընդհանուր տնտեսություն վարելու նպատակով տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները:**

**Առանձին բնակելի միավորումը, կամ դրա մի մասում կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող երկու և ավելի անձինք, ովքեր իրենց կենսական անհրաժեշտ ամեն ինչն ապահովում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ և մեկը, և մյուսը:**

Հետագա թյուրըմբռնումներից խուսափելու նպատակով Խորհրդատուն ընտանիքի կազմությանն առնչվող որոշ դեպքերի համար սահմանել է հետեւյալ մոտեցումները.

- ռեսպոնդենտի ընկալմամբ ընտանիքի անդամ համարվող, սակայն ժամանակավորապես (անկախ տեւողությունից) բացակայող հետեւյալ անդամներին. ա) արտագնա աշխատանքի մեկնած անձ՝ անկախ տեւողությունից, բ) ուսանող, որը դասերի ժամանակ բնակվում են ընտանիքի բնակության վայրից դուրս (ուսման վայրում)՝ **համարվում են ընտանիքի անդամ**
- ռեսպոնդենտի ընկալմամբ ընտանիքի անդամ համարվող, սակայն ժամանակավորապես (անկախ տեւողությունից) բացակայող հետեւյալ անդամներին. ա) պարտադիր զինծառայության մեջ գտնվող ժամկետային զինծառայող, բ) ազատազրկման վայրում գտնվող անձ, գ) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մանկատուն, ծերանոց) գտնվող անձ՝ **չեն համարվում ընտանիքի անդամ**:

*Քայլ 2* ▶ *Հետազոտության տվյալների հավաստիության մակարդակի հաշվարկում*

Հետազոտության մեջ ընդգրկված տարածքներում իրականացնելով 400-ական SS-ների հարցումներ, պատվիրատուն յուրաքանչյուր առանձին տարածքի համար ստացել է վստահության բարձր մակարդակ ունեցող տվյալներ: Ստորեւ ներկայացված աղյուսակում ցույց է տրված, թե յուրաքանչյուր տարածքում որքան են կազմում հավաքված տվյալների վստահության մակարդակը (Confidence Level) եւ հնարավոր շեղման մակարդակը (Confidence Interval):

**Աղյուսակ** 1 - **Հետազոտության տվյալների վստահության մակարդակի ցուցանիշները**

| Թիրախային տարածքներ | Տնային տնտեսությունների թիվը [1] | Վստահության մակարդակ (Confidence Level) | Շեղման մակարդակ (Confidence Interval) |
|---|---|---|---|
| Երեւան | ≈ 283,000 | 95% | 4.90% |
| Արարատ | ≈ 62,000 | 95% | 4.88% |
| Կոտայք | ≈ 63,000 | 95% | 4.88% |

[1] - Հաշվարկվել է 2011թ.-ի ՀՀ Մարդահամարի տվյալների հիման վրա՝ հիմք ընդունելով մշտական բնակչության թվաքանակը

*Քայլ 3* ▶ *Ընտրանքի բաշխումն ըստ քաղաքային եւ գյուղական բնակչության*

Թիրախային տարածքներից յուրաքանչյուրին բաժին ընկնող ընտրանքը բաժանվել է 2 մասի՝ քաղաքային եւ գյուղական բնակչություն: Բաժանումն իրականացվել է ըստ **յուրաքանչյուր տարածքում քաղաքային եւ գյուղական բնակչության համամասնության**:

**Աղյուսակ** 2 - **Ընտրանքի բաշխումն ըստ քաղաքային եւ գյուղական բնակչության**

| Թիրախային տարածքներ | Ընտրանքի չափն ըստ թիրախային տարածքների | Քաղաքային եւ գյուղական բնակչության համամասնությունը[1] | | Ընտրանքի բաշխումն ըստ քաղաքային եւ գյուղական բնակչության | |
|---|---|---|---|---|---|
| | | Քաղաքային | Գյուղական | Քաղաքային | Գյուղական |
| Երեւան | 400 | 100% | - | 400 | - |
| Արարատ | 400 | 28% | 72% | 114 | 286 |
| Կոտայք | 400 | 54% | 46% | 217 | 183 |
| **Ընդամենը** | 1,200 | 61% | 39% | 731 | 469 |

[1] - Աղբյուր՝ « ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2013 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ», ԱՎԾ 2013

*Քայլ 4* ▶ *Երեւանի ընտրանքի բաշխումն ըստ վարչական շրջանների*

Երեւանի տարածքում ընտրանքը բաժանվել է բոլոր 12 վարչական շրջանների միջեւ: Բաժանումն իրականացվել է ըստ **Երեւանի ընդհանուր բնակչության մեջ յուրաքանչյուր վարչական շրջանի բնակչության մասնաբաժնի**:

**Աղյուսակ** 3 - **Երեւանի ընտրանքի բաշխումն ըստ վարչական շրջանների**

| Երեւանի վարչական շրջաններ | Բնակչության մասնաբաժինն ընդհանուրի մեջ [1] | Ընտրանքի բաշխումն ըստ Երեւանի վարչական շրջանների |
|---|---|---|
| Աջափնյակ | 10% | 41 |
| Ավան | 5% | 20 |
| Արաբկիր | 11% | 44 |
| Դավիթաշեն | 4% | 16 |
| Էրեբունի | 12% | 47 |
| Կենտրոն | 12% | 47 |
| Մալաթիա-Սեբաստիա | 13% | 50 |

| | | |
|---|---|---|
| Նոր Նորք | 12% | 48 |
| Նորք-Մարաշ | 1% | 4 |
| Նուբարաշեն | 1% | 4 |
| Շենգավիթ | 13% | 51 |
| Քանաքեռ-Զեյթուն | 7% | 28 |
| **Ընդամենը** | 100% | 400 |

(1) - Աղբյուր՝ « ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2013 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ», ԱՎԾ 2013

*Քայլ 5* ▶ *Հետազոտության համայնքների ընտրություն*

Հետազոտության իրականացման համար մարզերում կատարվել է համայնքների ընտրություն: Կիրառվել են տարբեր մոտեցումներ: Քաղաքների ընտրություն, որպես այդպիսին, չի կատարվել. **Արարատի եւ Կոտայքի մարզերի բոլոր քաղաքները ընդգրկվել են հետազոտության մեջ**, իսկ ընտրանքը նրանց միջեւ բաշխվել է հավասարաչափ: Գյուղերի դեպքում, քանի որ դրանց թիվը մեծ է, կիրառվել է այլ մոտեցում: Գյուղերի թիվն ընտրվել է այնպես, որ.

ա) դրանց թիվը լինի բավարար չափով սահմանափակ, որպեսզի հարցազրույցների իրականացման համար տեխնիկական դժվարություններ չառաջանան,

բ) դրանց թիվը լինի բավարար մեծ, որպեսզի հնարավոր լինի ընտրանքում ընդգրկել մարզերի բոլոր տիպիկ խնդիրները ներկայացնող համայնքներ,

գ) դրանք ներկայացնեն մարզերի բոլոր տարածաշրջանները:

Ստորեւ ներկայացված է հետազոտության համայնքները եւ ընտրանքի բաշխվածքն ըստ այդ համայնքների.

**Աղյուսակ** 4 - **Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի համայնքների**

| Մարզեր | Տարածաշրջան | Համայնք | Ընտրանքի չափը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Քաղաք | Գյուղ | Ընդամենը |
| Արարատ | Արտաշատ | Արտաշատ | 29 | | 29 |
| | | Այգեպատ | | 29 | 29 |
| | | Այգեստան | | 29 | 29 |
| | | Բուրաստան | | 28 | 28 |
| | Արարատ | Արարատ | 29 | | 29 |
| | | Վեդի | 28 | | 28 |
| | | Ոսկետափ | | 29 | 29 |
| | | Տափերական | | 29 | 29 |
| | | Սուրենավան | | 28 | 28 |
| | | Գոռավան | | 28 | 28 |
| | Մասիս | Մասիս | 28 | | 28 |
| | | Մարմարաշեն | | 29 | 29 |
| | | Դաշտավան | | 29 | 29 |
| | | Սայաթ Նովա | | 28 | 28 |
| | **Ընդամենը** | | 114 | 286 | 400 |
| Կոտայք | Հրազդան | Հրազդան | 37 | | 37 |
| | | Չարենցավան | 36 | | 36 |
| | | Բջնի | | 31 | 31 |
| | | Սոլակ | | 30 | 30 |
| | Կոտայք | Աբովյան | 36 | | 36 |

| Մարզեր | Տարածաշրջան | Համայնք | Ընտրանքի չափը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Քաղաք | Գյուղ | Ընդամենը |
| | | Բյուրեղավան | 36 | | 36 |
| | | Արամուս | | 31 | 31 |
| | | Ակունք | | 30 | 30 |
| | Նաիրի | Եղվարդ | 36 | | 36 |
| | | Նոր Հաճն | 36 | | 36 |
| | | Զովունի | | 31 | 31 |
| | | Նոր Գեղի | | 30 | 30 |
| | **Ընդամենը** | | 217 | 183 | 400 |
| **Ընդամենը** | | | 331 | 469 | 800 |

*<u>Քայլ 6</u> ▸ <u>Հետազոտության գործիքի՝ հարցաշարի մշակում</u>*

Հետազոտության շրջանակներում իրականացվել են 1,200 **դեմ առ դեմ հարցազրույցներ**՝ համապատասխան **հարցաշարի** կիրառման միջոցով: Հարցաշարը մշակվել է Խորհրդատուի կողմից, որը լրամշակվել եւ վերջնական տեսք է ստացել ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ-ի պատասխանատուների առաջարկությունների հիման վրա:

*<u>Քայլ 7</u> ▸ <u>Աշխատակազմի ձեւավորում</u>*

Հետազոտության իրականացման համար կազմավորվել է 21 հոգուց բաղկացած աշխատակազմ, այդ թվում.

ա) հետազոտության համակարգող եւ գլխավոր վերլուծաբան - 1 հոգի
բ) թարգմանիչ - 1 հոգի
գ) տվյալների էլեկտրոնային բազայի մասնագետ - 1 հոգի
դ) հարցազրուցավարներ - 12 հոգի
ե) վերահսկողներ - 2 հոգի
զ) տվյալների մուտքագրողներ - 2 հոգի
է) վարորդներ - 2 հոգի:

Աշխատակազմի գործունեությունը կառավարվել եւ վերահսկվել է ծրագրի համակարգողի եւ տվյալների էլեկտրոնային բազայի մասնագետի կողմից: Հարցազրույցների իրականացման համար ձեւավորվել են 3 խմբեր: Մեկ խումբն աշխատել է Երեւանում, ընդ որում՝ մեկ վարչական շրջանում մեկ հարցազրուցավար սկզբունքով: Մյուս երկու խմբերը, յուրաքանչյուրը 1 մեքենա՝ «4 հարցազրուցավար+1 վարորդ» կազմով աշխատել են մարզերում:

*<u>Քայլ 8</u> ▸ <u>Հարցազրուցավարների նախապատրաստումը հարցազրույցներին</u>*

Հարցազրույցներին հարցազրուցավարների նախապատրաստումն իրականացվել է երկու փուլով: Առաջին փուլում իրականացվել է հարցազրուցավարների մեթոդավորում եւ հրահանգավորում՝ երկու խումբ կարեւոր հարցերի վերաբերյալ. ա) ծանոթություն ռեսպոնդենտի ընտրության եւ հարցաշարի լրացման տեխնիկայի հետ եւ բ) ծանոթություն կոտակային կենսաթոշակային համակարգի բոլոր առանձնահատկությունների եւ կիրառման պայմանների հետ: Հատուկ ուշադրություն է դարձվել հարցաշարում առկա հարցերի տրամաբանական կապերին, անցումներին, անծանոթ տերմինների եւ անվանումների բացատրությանը: Ռեսպոնդենտի ընտրության եւ հարցաշարի լրացման տեխնիկայի մեթոդավորման երկրորդ փուլն անցկացվել է հարցաշարի փորձարկման նպատակով իրականացված փորձնական հարցազրույցներից հետո:

*Քայլ 9 ▸ Հարցաշարի փորձարկումը՝ փորձնական հարցազրույցներ*

Փորձնական հարցազրույցներն իրականացվել են 2013թ.-ի դեկտեմբերի կեսերին: Ընդհանուր առմամբ իրականացվել են 60 հարցազրույցներ՝ 5 հարցազրույց յուրաքանչյուր հարցազրուցավարի կողմից: Փորձնական հարցազրույցներն անցկացվել են Երեւանում: Փորձնական հարցազրույցների ժամանակ հարցաշարը ենթարկվել է որոշակի փոփոխությունների՝ ինչպես տեխնիկական, այնպես էլ բովանդակային բնույթի: Փորձնական հարցազրույցներից հետո հարցաշարը բերվել է վերջնական տեսքի, որից հետո անցկացվել է ռեսպոնդենտի ընտրության եւ հարցաշարի լրացման տեխնիկայի մեթոդավորման երկրորդ փուլը: Այս փուլում հարցազրուցավարներին է ներկայացվել հարցաշարում տեղ գտած փոփոխությունները, նկարագրվել են հարցումների ընթացքում հնարավոր դժվարությունները եւ դրանց հաղթահարման լուծումները, տրվել են վերջին ցուցումները:

*Քայլ 10 ▸ Դաշտային աշխատանքներ*

Հիմնական հարցազրույցների անցկացման նպատակով դաշտային աշխատանքներն իրականացվել են 2014թ.-ի հունվարին: Հարցազրույցների սկզբնական փուլում վերահսկողները ներկա են գտնվել տարբեր հարցազրուցավարների մի քանի հարցազրույցների: Հաջորդ օրերին վերահսկողները տեղում այցերի կամ հեռախոսազանգերի միջոցով ընտրանքային կարգով ստուգել են հարցազրույցների անցկացման փաստերի եւ հավաքագրված տվյալների իսկությունը: Ընդհանուր առմամբ վերահսկողական գործողություններ են իրականացվել կայացած հարցազրույցների 6.5%-ի նկատմամբ:

Դաշտային աշխատանքների ընթացքում հարցազրուցավարներն այցելել են 3,308 հասցե: Հարցազրուցավարների այցերի արդյունքը ներկայացված է ստորեւ բերված աղյուսակում.

**Աղյուսակ** 5 - **Հարցազրուցավարների այցերի արդյունքը**

| Թիրախային տարածքներ | Այցելած հասցեների թիվը եւ այցելությունների արդյունքները | | | | | Հրաժարման դեպքերի տեսակարար կշիռը |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը այցելած հասցեներ, որից → | *Կայացած հարցազրույցներ (լրացված հարցաշարեր)* | *Մերժումներ* | *Ընտրված ռեսպոնդենտն անհասանելի է* | *Տան դուռը փակ է / պանը մարդ չկա* | |
| Երեւան | 1,416 | *400* | *415* | *67* | *534* | 29% |
| Արարատ | 910 | *400* | *168* | *84* | *258* | 18% |
| Կոտայք | 982 | *400* | *120* | *133* | *329* | 12% |
| **Ընդամենը** | 3,308 | *1,200* | *703* | *284* | *1,121* | 21% |

Հետազոտությանը մասնակցելուց հրաժարման դեպքերի տեսակարար կշիռը կազմել է 21%[1]: Հրաժարման ամենաբարձր մակարդակը գրանցվել է ք.Երևանում՝ 29%, ինչը նկատվում է բոլոր հանրային հարցումների ժամանակ:

*Քայլ 11 ▸ Ռեսպոնդենտների ընտրությունը*

SS-ներում հարցազրույցների իրականացման համար տնտեսության անդամների կազմից նախապես կատարվել է ռեսպոնդենտի ընտրություն: Ընտրության **առաջին չափորոշիչը եղել է տարիքը**: Պատվիրատուի պահանջով հարցազրույցներն անցկացվել են հետազոտության պահին 18-62 **տարեկան անձանց շրջանում**: Ընտրության երկրորդ գործիքը եղել է մեթոդը, որի միջոցով ապահովվել է ընտրանքի ներկայացուցչականությունը եւ պատահականությունը: Խոսքը գնում է **վերջին ծննդյան մեթոդով ռեսպոնդենտի ընտրության մասին**: Այսպիսով, առանձին SS-ում հարցազրույցի համար ռեսպոնդենտն ընտրվել է 18-62 տարեկան անդամների կազմից, ում **ծննդյան օրը նախորդում է եւ ամենամոտն է գտնվում հարցազրույցի անցկացման օրվան**: Այս մեթոդի կիրառման պարագայում

[1] Ցուցանիշը հաշվարկվում է որպես հրաժարման դեպքերի հարաբերություն ընդամենը այցելած հասցեների թվին

հարցազրույցների ընթացքը հատկապես դանդաղում է՝ ռեսպոնդենտի տանը չլինելու պատճառով: Սա հատկապես լուրջ խնդիր է քաղաքային համայնքներում, իսկ Երեւանում՝ առհասարակ: Այդ իսկ պատճառով Խորհրդատուն կիրառել է **կոնկրետ տեղամասում աշխատելու ընթացքում** 3 **հետայցերի մեթոդը**: 3 այցերից հետո հարցազրույցի չկայացման դեպքում SS-ը փոխարինվել է մեկ ուրիշով:

*Քայլ 12* ▸ *Հետազոտության տվյալների ամփոփումը*

Հարցազրույցների արդյունքում լրացված հարցաշարերի տվյալները թվայնացվել են MS Excel ծրագրային հենքի վրա ստեղծված **տվյալների էլեկտրոնային բազայի** մեջ (այն որպես առանձին արդյունք՝ հանձնվել է ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ-ին): Նախքան տվյալների վիճակագրական վերլուծությունը կատարվել է բոլոր բաց հարցերի կոդավորում եւ խմբավորում: Հարցաշարի լրացման եւ տվյալների մուտքագրման ժամանակ հնարավոր վրիպակների հայտնաբերման նպատակով տվյալների էլեկտրոնային բազան (հարցաթերթերի տվյալները) նախապես ենթարկվել է տրամաբանական վերլուծության, հայտնաբերվել են բոլոր տրամաբանական հակասությունները, կատարվել են ուղղումներ: Այնուհետեւ կատարվել է տվյալների վիճակագրական վերլուծություն, որի հիման վրա էլ կազմվել է սույն վերլուծական հաշվետվությունը:

---

Այսպիսով, ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ-ի շրջանակներում իրականացված «ԿԲԻԾ գործողությունների առաջընթացի գնահատման համար մոնիտորինգի եւ գնահատման ցուցիչների մշակման ելակետային հետազոտություն» աշխատանքն իրականացվել է **Երեւան համայնքի եւ Հայաստանի** 2 **մարզերի** SS-ների շրջանում 1,200 **դեմ առ դեմ հարցազրույցների** հիման վրա: Բոլոր հարցազրույցներն անցկացվել են 2014**թ.-ի հունվարին**: Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստվել է 2014**թ.-ի փետրվարին**:

# 2 ՌԵՍՊՈՆԴԵՆՏՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ռեսպոնդենտների նկարագրության համար առանձնացվել են հետեւյալ բնութագրիչները՝ **սեռ**, **տարիք**, **կրթական մակարդակ** եւ **զբաղվածության կարգավիճակ**:

**Ռեսպոնդենտների բաշխումն ըստ սեռի** ներկայացված է ստորեւ.

**Գծապատկեր** 1 - **Ռեսպոնդենտների բաշխումն ըստ սեռի**




**Ռեսպոնդենտների բաշխումն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Սեռ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Արական | 37% | 41% | 33% | 36% | 38% |
| Իգական | 63% | 59% | 68% | 64% | 62% |
| Ընդամենը | 100% | 100% | 100% | 100% | 100% |

**Ռեսպոնդենտների տարիքային կազմը** ցույց է տալիս, որ հետազոտության մեջ մասնակցություն են ունեցել 18-62 տարիքային խմբի բոլոր ներկայացուցիչները: 5 տարվա տարիքային միջակայքով ռեսպոնդենտների դասակարգման արդյունքները ցույց են տալիս, որ տարիքային բոլոր ենթախմբերը ներկայացված են գրեթե հավասարապես:

**Գծապատկեր** 2 - **Ռեսպոնդենտների բաշխումն ըստ տարիքի**



**Ռեսպոնդենտների բաշխումն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Տարիքային խմբեր | Սեռ | | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| 18-19 տ. | 3% | 3% | 3% | 3% | 3% | 3% | 3% |
| 20-24 տ. | 16% | 9% | 12% | 14% | 9% | 11% | 12% |
| 25-29 տ. | 10% | 11% | 11% | 10% | 12% | 10% | 12% |
| 30-34 տ. | 11% | 13% | 11% | 11% | 15% | 13% | 12% |
| 35-39 տ. | 12% | 14% | 14% | 13% | 14% | 14% | 12% |
| 40-44 տ. | 12% | 12% | 11% | 15% | 11% | 11% | 15% |
| 45-49 տ. | 8% | 10% | 8% | 11% | 8% | 7% | 12% |
| 50-54 տ. | 13% | 12% | 13% | 12% | 12% | 13% | 12% |
| 55-59 տ. | 8% | 11% | 11% | 8% | 11% | 11% | 9% |
| 60-62 տ. | 6% | 5% | 8% | 4% | 5% | 7% | 3% |
| Ընդամենը | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Սույն հաշվետվության մեջ հետազոտության արդյունքները ներկայացված են նաեւ ըստ տարիքային խմբերի: Սակայն դա չի արվել տարիքային խմբերի վերոհիշյալ բաշխվածով: **Պատվիրատուի պահանջով կատարվել է ռեսպոնդենտների խմբավորում ըստ հետեւյալ տարիքային խմբերի՝ ա**) 18-24 **տարեկան**, **բ**) 25-40 **տարեկան**, **եւ գ**) 41-62 **տարեկան**: **Հետազոտության արդյունքները ներկայացված են ըստ նշված տարիքային խմբերի**:

**Գծապատկեր** 3 - **Ռեսպոնդենտների բաշխումն ըստ կրթական մակարդակի**




**Ռեսպոնդենտների բաշխումն ըստ կրթական մակարդակի, սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Կրթական մակարդակ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Կրթություն չունեն | 0.2% | - | - | 0.2% | - |
| Տարրական | - | 0.1% | - | - | 0.2% |
| Հիմնական | 9% | 6% | 9% | 6% | 8% |
| Միջնակարգ | 40% | 37% | 38% | 41% | 36% |
| Նախնական մասնագիտական | 1% | 1% | 2% | 1% | 1% |
| Միջին մասնագիտական | 19% | 28% | 10% | 19% | 33% |
| Թերի բարձրագույն եւ ուսանող | 9% | 5% | 26% | 5% | 1% |

| Կրթական մակարդակ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Բարձրագույն | 22% | 22% | 15% | 26% | 21% |
| Հետբուհ. մասնագիտ. կրթություն | 1% | 1% | 1% | 1% | 0.4% |
| Ընդամենը | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Կրթական մակարդակ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Կրթություն չունեն | - | 0.3% | - | - | 0.2% |
| Տարրական | - | 0.3% | - | - | 0.2% |
| Հիմնական | 2% | 11% | 9% | 3% | 13% |
| Միջնակարգ | 24% | 48% | 43% | 31% | 50% |
| Նախնական մասնագիտական | 1% | 1% | 1% | 1% | 1% |
| Միջին մասնագիտական | 23% | 23% | 28% | 25% | 23% |
| Թերի բարձրագույն եւ ուսանող | 9% | 3% | 8% | 8% | 4% |
| Բարձրագույն | 41% | 13% | 12% | 31% | 8% |
| Հետբուհ. մասնագիտ. կրթություն | 1% | 1% | 0% | 1% | 0.4% |
| Ընդամենը | 100% | 100% | 100% | 100% | 100% |

**<u>Ռեսպոնդենտների կրթական մակարդակը</u>** նման է Հայաստանի ամբողջ բնակչության կրթական մակարդակի ցուցանիշներին: Առկա վիճակագրությունը թույլ չի տալիս համեմատություն անցկացնել բացարձակ նույն տարիքային խմբերի միջեւ[2], սակայն հիմնական ցուցանիշները վկայում են այն մասին, որ սույն հետազոտությանը մասնակցած ռեսպոնդենտներն ընդհանուր առմամբ ճիշտ են ներկայացնում Հայաստանի բնակչության կրթական մակարդակը:

**Աղյուսակ 6 - Հետազոտությանը մասնակցած ռեսպոնդենտների կրթական մակարդակի համեմատությունը Հայաստանի ցուցանիշների հետ**

| | **Հայաստան**<br>*15+ տարիքի մշտ. բնակչության կրթական մակարդակը* (1) | **Ռեսպոնդենտներ**<br>*18-62 տ. անձանց կրթական մակարդակը* |
|---|---|---|
| Կրթություն չունեն | 1% | 0.1% |
| Տարրական | 3% | 0.1% |
| Հիմնական | 9% | 7% |
| Միջնակարգ | 45% | 44% (2) |
| Նախնական մասնագիտական | 3% | 1% |
| Միջին մասնագիտական | 17% | 24% |
| Բարձրագույն մասնագիտական | 22% | 22% |
| Հետբուհական մասնագիտական կրթություն | 0.3% | 1% |
| Ընդամենը | 100% | 100% |

(1) - Աղբյուր՝ ՀՀ 2011թ. մարդահամար

(2) - Ներառում է ռեսպոնդենտների թվում միջնակարգ եւ թերի բարձրագույն կրթություն ունեցողներին, ուսանողներին

**<u>Ռեսպոնդենտների զբաղվածության կարգավիճակի</u>** ցուցանիշները թերեւս կարելի է համարել ճիշտ հետազոտված տարածքների՝ Երեւան քաղաքի, Արարատի եւ Կոտայքի մարզերի համար: Սակայն պետք է ձեռնպահ մնալ դրանք ամբողջ Հայաստանի համար հիմք ընդունելուց, քանի որ Երեւանի եւ մարզերի

[2] Հետազոտությանը մասնակցած ռեսպոնդենտները միայն Երեւանից են եւ Արարատի եւ Կոտայքի մարզերից, որոնց տարիքն ընկած է 18-62 տ. միջակայքում, իսկ համեմատության համար Հայաստանի առկա ցուցանիշները վերաբերվում են 15 տարեկանից բարձր ամբողջ բնակչությանը

ռեսպոնդենտների զբաղվածության կարգավիճակի ցուցանիշների միջեւ կան զգալի տարբերություններ: Դա հատկապես ակնառու է Երեւանում եւ մարզերում գրանցված աշխատողների թվաքանակի տարբերությունների դեպքում.

**Գծապատկեր 4 - Ռեսպոնդենտների բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի**




**Ռեսպոնդենտների բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի, սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Զբաղվածության կարգավիճակ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Աշխատող (գրանցված) | 34% | 26% | 17% | 35% | 28% |
| Աշխատող (չգրանցված) | 14% | 5% | 8% | 8% | 9% |
| Ինքնազբաղված | 13% | 5% | 3% | 6% | 11% |
| Աշխատանք փնտրող | 19% | 12% | 25% | 16% | 11% |
| Սպասում են աշխատանքը. սեզոնին | 5% | 1% | 1% | 2% | 3% |
| Ուսանող | 4% | 3% | 25% | 0.2% | - |
| Թոշակառու | 4% | 2% | 5% | 0.4% | 4% |
| Չաշխատող հաշմանդամ. պատճառով | 3% | 2% | - | 1% | 5% |
| Տնային տնտես (ուհի) | 2% | 44% | 15% | 33% | 29% |
| Այլ | 0.5% | - | 1% | 0.2% | - |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Զբաղվածության կարգավիճակ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Աշխատող (գրանցված) | 41% | 25% | 22% | 37% | 17% |
| Աշխատող (չգրանցված) | 9% | 11% | 6% | 8% | 10% |
| Ինքնազբաղված | 4% | 10% | 11% | 4% | 14% |
| Աշխատանք փնտրող | 13% | 18% | 13% | 15% | 14% |
| Սպասում են աշխատանքը. սեզոնին | - | 4% | 3% | 1% | 4% |
| Ուսանող | 5% | 2% | 4% | 4% | 3% |
| Թոշակառու | 5% | 1% | 3% | 4% | 1% |
| Չաշխատող հաշմանդամ. պատճառով | 2% | 4% | 2% | 2% | 3% |
| Տնային տնտես (ուհի) | 23% | 25% | 37% | 25% | 34% |
| Այլ | 0.3% | 0.3% | - | 0.1% | 0.2% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Հետազոտության արդյունքներով, հարցազրույցների մասնակցած 1,200 **ռեսպոնդենտներից** 185-**ը կամ** 15%-**ը կազմել են պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցները**: Այսինքն՝ դրանք այն անձինք են, ովքեր ծնվել են 01.01.1974թ.-ին եւ դրանից հետո եւ հետազոտության պահին հանդիսանում էին վարձու աշխատողներ:

**Գծապատկեր** 5 - **Ռեսպոնդենտների թվում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցները**




**Ռեսպոնդենտների թվում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների բաշխումն ըստ սեռի, տարածքների, բնակավայրի տիպի**

| | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցներ | 46% | 54% | 16% | 84% | - |

| | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցներ | 42% | 31% | 28% | 76% | 24% |

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցներն **ավելի շատ հանդիպում են Երեւանում**, որտեղ գրանցված աշխատանք ունեցողների թիվը զգալիորեն գերազանցում է մարզերի ցուցանիշին: Ինչպես նաեւ՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցները **հիմնականում հանդիպում են քաղաքներում** (ավելի քան 3 անգամ ավելի, քան գյուղերում): Պատճառն այն է, որ գյուղատնտեսական գործունեության մեջ զբաղված աշխատողները, որպես ինքնազբաղվածներ կամ չգրանցված աշխատողներ, չեն մասնակցում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին:

# 3 ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում ներդրվող կուտակային կենսաթոշակային համակարգն (այսուհետ՝ **ԿԿ համակարգ**) ունի բազմաթիվ պայմաններ: Մասնավորապես, տարբեր են ԿԿ համակարգին մասնակցության սկզբունքները (պարտադիր եւ կամավոր), շահառուների կազմն ըստ տարիքի, զբաղվածության կարգավիճակի, աշխատանքի եւ գործունեության բնույթի (վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար) եւ այլն: Այս բոլոր առանձնահատկությունները վկայում են այն մասին, որ **ԿԿ համակարգն ունի բազմաթիվ պայմաններ եւ դրանցից յուրաքանչյուրը հանդիսանում է մարդկանց տեղեկացվածության եւ վերաբերմունքի առանձին օբյեկտ**:

Կա մի հանգամանք, որն իր ազդեցությունն է թողել ռեսպոնդենտների պատասխանների վրա: **Հետազոտության անցկացման պահը համընկել է կենսաթոշակային բարեփոխումների դեմ հզոր հանրային բողոքի ալիքի հետ**: Բողոքի ակցիաների եւ ԶԼՄ-ների միջոցով դրանց լուսաբանման ժամանակ ԿԿ համակարգի վերաբերյալ մեծ քանակությամբ տեղեկատվություն է տարածվել: Անկախ նրանից, թե այդ տեղեկատվական հոսքերը պրոֆեսիոնալ հարթությունում են, թե ոչ՝ այդ հանրային քննարկումները եւ բողոքի ակցիաներն իրենց որոշակի ազդեցությունն են թողել մարդկանց տեղեկացվածության եւ վերաբերմունքի վրա: Օրինակ՝ Երևան քաղաքում, որտեղ հիմնականում կազմակերպվում են կենսաթոշակային բարեփոխումների դեմ բողոքի ակցիաները, մարդիկ ավելի տեղեկացված են եւ ավելի կայուն իրենց դիրքորոշումներում (դրական թե բացասական), քան մարզերում:

Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հետազոտության արդյունքում ստացված **տվյալները որոշ դեպքերում համեմատվել են** 2010թ.-ին իրականացված մեկ այլ հետազոտության տվյալների հետ, որը կոչվում է *«Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային տեղեկացվածության ելակետային հետազոտություն, 2010»*[3]: Նշված հետազոտությունն իրականացվել է Խորհրդատուի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ «Կենսաթոշակային եւ աշխատանքի շուկայի բարեփոխումների» Ծրագրի շրջանակներում[4]: Տվյալների համեմատությունը ակնառու է դարձնում 2010-2013թթ.-ին Հայաստանի բնակչության շրջանում կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության մակարդակի եւ վերաբերմունքի փոփոխության միտումները:

ԿԿ համակարգի մասին ռեսպոնդենտների տեղեկացվածության եւ վերաբերմունքի վերաբերյալ ստացված բոլոր պատասխանները ներկայացված են ըստ հետեւյալ բնութագրիչների.

| | |
|---|---|
| **Բոլոր ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրությունը** | ▸ 100% = 1,200 ռեսպոնդենտ |
| **Բոլոր ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի** | ▸ Արական 100% = 442 ռեսպոնդենտ<br>▸ Իգական 100% = 758 ռեսպոնդենտ |
| **Բոլոր ռեսպոնդենտների պատասխաններն ըստ տարիքի** | ▸ 18-24 տ. 100% = 173 ռեսպոնդենտ<br>▸ 25-40 տ. 100% = 470 ռեսպոնդենտ<br>▸ 41-62 տ. 100% = 557 ռեսպոնդենտ |
| **Բոլոր ռեսպոնդենտների պատասխաններն ըստ տարածքների** | ▸ Երեւան 100% = 400 ռեսպոնդենտ<br>▸ Արարատի մարզ 100% = 400 ռեսպոնդենտ<br>▸ Կոտայքի մարզ 100% = 400 ռեսպոնդենտ |

[3] Տես «Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային տեղեկացվածության ելակետային հետազոտություն, 2010», USAID PALM / ԱՄ Փարթնըրզ

[4] USAID PALM Project

| | |
|---|---|
| **Բոլոր ռեսպոնդենտների պատասխաններն ըստ բնակավայրի տիպի** | ▸ Քաղաք 100% = 731 ռեսպոնդենտ<br>▸ Գյուղ 100% = 469 ռեսպոնդենտ |

Բացի այդ, **պարտադիր ԿԿ համակարգի մասին տեղեկացվածության հարցերը վերլուծելիս զուգահեռ ներկայացվել են նաեւ միայն պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների պատասխանները**:

## 3.1 ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հետազոտված տարածքներում (Երեւան, Արարատի եւ Կոտայքի մարզեր) ԿԿ համակարգի կիրառության որոշ պայմաններ մարդկանց շրջանում ճանաչված են, իսկ որոշները՝ ոչ: Ռեսպոնդենտներն ավելի շատ տեղյակ են ԿԿ համակարգի այն պայմանների մասին, որոնց մասին անընդհատ խոսվել է եւ բավարար չափով լուսաբանվել: Այդ շարքում կարելի է դասել մասնակցության պարտադիր եւ կամավոր սկզբունքները, գործարկման ժամկետները: Իսկ այնպիսի պայմանների մասին տեղեկացվածությունը, ինչպիսիք են կուտակային վճարների չափերը, որտեղ պետք է կուտակվեն այդ վճարները, ինչպես ընտրել կենսաթոշակային ֆոնդ, ավելի սուղ են:

### 3.1.1 <u>Տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին</u>

**Գծապատկեր** 6 - **Տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին**

| | | |
|---|---|---|
| Հարց 1 | → | **Դուք լսե՞լ եք այն մասին, որ Հայաստանում իրականացնում են կենսաթոշակային բարեփոխումներ եւ դրանց արդյունքում գործարկվելու է նոր՝ կուտակային կենսաթոշակային համակարգ** |

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 85% | 86% | 78% | 83% | 90% |
| Ոչ | 15% | 14% | 22% | 17% | 10% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 92% | 84% | 81% | 89% | 80% |
| Ոչ | 8% | 16% | 19% | 11% | 20% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

- Կենսաթոշակային բարեփոխումների մասին լսել են ռեսպոնդենտների 86%-ը: **Համեմատության համար**՝ 2010թ.-ին այս ցուցանիշը կազմում էր 36%: Ակնհայտ է զգալի առաջադիմություն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հանրության մի զգալի հատվածին՝ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող մասնավոր անձանց եւ ֆերմերներին կենսաթոշակային բարեփոխումներն իրենց պարտադիր մասով որեւէ կերպ չեն առնչվում:
- **Այդ հարցում տղամարդկանց եւ կանանց տեղեկացվածության միջեւ տարբերություններ չկան**:
- Կենսաթոշակային բարեփոխումների մասին երիտասարդներն ավելի քիչ են լսել, քան առավել տարեց մարդիկ: Կարելի է ենթադրել, որ կենսաթոշակների թեմայի հրատապությունը մարդկանց մոտ աճում է նրանց տարիքին զուգահեռ: Մասնավորապես, կենսաթոշակային բարեփոխումների մասին լսել են 18-24 տարիքային խմբի ռեսպոնդենտների 78%-ը, իսկ 41-62 տարիքային խմբում՝ 90%-ը: **Հավանաբար երիտասարդների մոտ կա մտայնություն**, **որ կենսաթոշակների թեման անմիջապես իրենց վերաբերվելու է տասնյակ տարիներ անց**, **ինչի պատճառով էլ դրա նկատմամբ հետաքրքրությունը համեմատաբար նվազ է**:
- Այնուամենայնիվ, կենսաթոշակային բարեփոխումների մասին ռեսպոնդենտների ամենատեղեկացված խումբը կազմում են ոչ թե ամենատարեց ռեսպոնդենտները, այլ ռեսպոնդենտների այն խումբը, ովքեր 2014թ.-ի հունվարի 1-ից պետք է մասնակցեին պարտադիր ԿԿ համակարգին (90%՝ ընդհանուրի 86%-ի համեմատ):
- Կենսաթոշակային բարեփոխումների մասին, ի համեմատություն մարզերի, ավելի շատ լսել են Երեւանում (92%): Դրանում իրենց ազդեցությունն ունեն կենսաթոշակային բարեփոխումների դեմ հանրային բողոքի ակցիաները եւ դրանցով պայմանավորված՝ թեմայի վերաբերյալ հանրային քննարկումների թվի աճը եւ ԶԼՄ-ներում հարցի արծարծման հաճախականության աճը:
- Կենսաթոշակային բարեփոխումների մասին ավելի շատ տեղյակ են քաղաքային բնակչության շրջանում (89%), քան գյուղերում (80%):

### 3.1.2 Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները

Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության հիմնական աղբյուրը լսարանի ամենամեծ ընդգրկում ունեցող ԶԼՄ-ն է, որն, անխոս, հեռուստատեսությունն է (79%): Տեղեկատվության տարածման հարցում հեռուստատեսության առաջատար դիրքերն ապահովվել է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից կենսաթոշակային բարեփոխումների մասին թողարկված տեղեկատվական վահանակների հաշվին, որոնք հեռուստաեթերով հեռարձակվեցին 2013թ.-ի ընթացքում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ **ռեսպոնդենտների զբաղվածության կարգավիճակը եւ հեռուստատեսությունից տեղեկացվածությունը հակադարձ համեմատական կապ ունեն**. որքան մարդիկ տնտեսապես ավելի ակտիվ են (օրինակ՝ ունեն գրանցված աշխատանք), այնքան հեռուստատեսությունը, որպես տեղեկատվության աղբյուր, համեմատաբար ավելի փոքր դեր ունի.

**Աղյուսակ** 7 - **Ռեսպոնդենտների զբաղվածության կարգավիճակի եւ հեռուստատեսության՝ որպես տեղեկատվության աղբյուրի կապը**

| Ռեսպոնդենտների բնութագրիչներ | | Երեւան | Արարատ | Կոտայք |
|---|---|---|---|---|
| Զբաղվածության կարգավիճակ | → Աշխատող (գրանցված) | 41% | 25% | 22% |
| Տեղեկացվածության աղբյուր | → Հեռուստատեսություն | 69% | 76% | 85% |

Նման մի կապ էլ նկատվում է ինտերնետի ՝ որպես տեղեկացվածության աղբյուրի, դեպքում: Որքան մարդիկ տնտեսապես ավելի ակտիվ են (օրինակ՝ ունեն գրանցված աշխատանք), այնքան ինտերնետի դերը, որպես կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրի, ավելի մեծ է:

Գծապատկեր 7 - Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները

| Հարց 2 | → | Որտեղի՞ց եք լսել Հայաստանում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների եւ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին |
|---|---|---|

*! Այս հարցին ռեսպոնդենտները տվել են մեկից ավելի պատասխաններ*

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները** | **Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Հեռուստատեսությունից | 79% | 79% | 69% | 76% | 85% |
| Ծանոթներից, բարեկամներից, ընկերներից, գործընկերներից | 17% | 18% | 24% | 18% | 15% |
| Ինտերնետից | 9% | 4% | 13% | 6% | 3% |
| Տպագիր մամուլից, բուկլետներից, տեղեկատվ. թերթիկներից | 3% | 3% | 2% | 2% | 4% |
| Ռադիոյից | 1% | 2% | 4% | 1% | 1% |
| Միտինգներից, հանրային ակցիաներից | 1% | 0.4% | 2% | 1% | - |
| Դասընթացներից եւ սեմինարներից | 0.2% | 0.3% | 1% | 0.4% | - |
| Չեն հիշում / դժվարացել են պատասխանել | 0.5% | | 1% | 0.2% | - |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | 15% | 14% | 22% | 17% | 10% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Հեռուստատեսությունից | 83% | 79% | 76% | 82% | 75% |
| Ծանոթներից, բարեկամներից, ընկերներից, գործընկերներից | 17% | 27% | 9% | 17% | 18% |
| Ինտերնետից | 5% | 7% | 6% | 6% | 4% |
| Տպագիր մամուլից, բուկլետներից, տեղեկատվ. թերթիկներից | 4% | 5% | 2% | 4% | 3% |
| Ռադիոյից | 1% | 3% | 1% | 2% | 1% |
| Միտինգներից, հանրային ակցիաներից | 1% | 2% | - | 1% | 1% |
| Դասընթացներից եւ սեմինարներից | 1% | - | - | 0.4% | - |
| Չեն հիշում / դժվարացել են պատասխանել | 1% | - | -% | 0.3% | - |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | 8% | 16% | 19% | 11% | 20% |

**Կենսաթոշակային բարեփոխումների մասին տղամարդկանց եւ կանանց տեղեկացվածության աղբյուրները գրեթե նույնն են եւ առանձնահատկություններ չեն արձանագրվել**:

Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկատվության փոխանցման երկրորդ ամենատարածված եղանակը փոխադարձ զրույցներն են ռեսպոնդենտների եւ **այլ անձանց** (**ծանոթներ**, **բարեկամներ**, **ընկերներ**, **գործընկերներ**) միջեւ (18%): Այս ցուցանիշը շատ ավելի բարձր է (35%), եթե դիտարկվի միայն ռեսպոնդենտների այն խումբը, ովքեր հանդիսանում են պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցներ: Ակնհայտ է, որ վերջիններս ավելի շատ են այլ անձանց հետ քննարկում կենսաթոշակային բարեփոխումների թեման, քանի որ հենց իրենք են հանդիսանում այդ բարեփոխումների անմիջական շահառուն:

Որպես տեղեկատվության տարածման միջոց, իր դերով կայուն աճ է գրանցում **ինտերնետը՝** ի դեմս ինտերնետային լրատվական միջոցների եւ սոցիալական ցանցերի: **Համեմատության համար՝** երեք տարի առաջ (2010թ.-ին) նույն կենսաթոշակային բարեփոխումների մասին ինտերնետից տեղեկություն ստացած անձանց մասնաբաժինը կազմում էր ընդամենը 1%: Պետք է նկատել, սակայն, որ ինտերնետը, որպես կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուր, **տղամարդկանց շրջանում օգտագործվում է երկու անգամ ավելի շատ** (9%), **քան կանանց մոտ** (4%):

### 3.1.3 Տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակների մասին

Կենսաթոշակային բարեփոխումների նպատակները ոչ բոլոր ռեսպոնդենտների համար են ընկալելի եւ հասկանալի: Ռեսպոնդենտների 14%-ից բացի, ովքեր ընդհանրապես չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին (տես նախորդ հարցը), եւս 26%-**ը ի վիճակի չեն սահմանել դրանց նպատակները**: Ռեսպոնդենտների մնացած մասը (60%) նշել են բարեփոխումների նպատակները, որտեղ լավագույնս արտացոլված են բարեփոխումների նկատմամբ մարդկանց տրամադրությունները:

**Գծապատկեր** 8 - **Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի ներդրման նպատակների մասին**

| | | |
|---|---|---|
| Հարց 3 | → | **Ի՞նչ նպատակ է հետապնդում կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը եւ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը** |



**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Ուզում են ապահովեն բարեկեցիկ ծերություն | 19% | 18% | 25% | 17% | 18% |
| Ժողովրդի թալանի եւ կողոպուտի նոր ձեւ է | 15% | 10% | 6% | 11% | 14% |
| Պետության համար փող են հայթայթում | 8% | 8% | 8% | 8% | 8% |
| Չգիտեն, սակայն ոչ մի լավ բան չեն սպասում, չեն վստահում | 7% | 8% | 5% | 7% | 8% |
| Ոմանց համար բիզնես է | 5% | 4% | 2% | 4% | 5% |
| Անիմաստ բան է, անհեթեթություն | 3% | 3% | 2% | 3% | 4% |
| Ամեն մարդ ինքը պետք է հոգա իր թոշակի հարցը | 3% | 2% | 3% | 2% | 3% |
| Չգիտեն, սակայն դրական սպասումներ ունեն | 1% | 1% | - | 1% | 1% |
| Այլ | 5% | 3% | 2% | 3% | 5% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 20% | 28% | 25% | 28% | 23% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | 15% | 14% | 22% | 17% | 10% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Ուզում են ապահովեն բարեկեցիկ ծերություն | 16% | 21% | 18% | 18% | 19% |
| Ժողովրդի թալանի եւ կողոպուտի նոր ձեւ է | 22% | 7% | 7% | 15% | 6% |
| Պետության համար փող են հայթայթում | 15% | 5% | 5% | 11% | 4% |
| Չգիտեն, սակայն ոչ մի լավ բան չեն սպասում, չեն վստահում | 9% | 7% | 6% | 8% | 6% |
| Ոմանց համար բիզնես է | 6% | 4% | 3% | 5% | 4% |
| Անիմաստ բան է, անհեթեթություն | 4% | 3% | 3% | 4% | 3% |
| Ամեն մարդ ինքը պետք է հոգա իր թոշակի հարցը | 1% | 5% | 2% | 2% | 4% |
| Չգիտեն, սակայն դրական սպասումներ ունեն | 1% | 3% | - | 1% | 1% |
| Այլ | 4% | 4% | 4% | 4% | 3% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 16% | 28% | 34% | 22% | 32% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | 8% | 16% | 19% | 11% | 20% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների ամենամեծ խումբը (18%) կարծում է, որ **կենսաթոշակային բարեփոխումների նպատակը բարեկեցիկ ծերության ապահովումն է**: Եվս 2%-**ը** կարծում է, որ նոր համակարգում **յուրաքանչյուր անձ ինքը պետք է հոգա իր թոշակի հարցը**: 1%-**ն** էլ, հստակ չիմանալով բարեփոխումների նպատակները, այնուամենայնիվ **դրական սպասումներ ունի դրանցից**:

Ռեսպոնդենտների 39%-**ի համար կենսաթոշակային բարեփոխումների նպատակները բարի չեն** կամ **առնվազն հօգուտ ժողովրդի չեն**: Այս խմբի ռեսպոնդենտների պատասխաններում նկատելի, որ նրանք **անվստահությամբ են վերաբերվում իշխանություններին**: Ռեսպոնդենտների 12%-**ը** կարծում են, որ իշխանությունները ԿԿ համակարգի ներդրմամբ իրենց **թալանելու եւ կողոպտելու նոր ձեւ են մշակել**, 7%-**ը** լավ չպատկերացնելով բարեփոխումների նպատակը, այնուամենայնիվ **ոչ մի լավ բան չեն սպասում**: Այս խմբի ռեսպոնդենտները **ապագայի նկատմամբ դրական սպասումներ եւ կանխատեսումներ չունեն**: Այդ հանգամանքը հարցականի տակ է դնում երկարաժամկետ խնայողություններ անելու նպատակահարմարությունը:

- **Կենսաթոշակային բարեփոխումների նպատակների մասին խոսելիս տղամարդիկ եւ կանայք գրեթե միանման պատասխաններ են տալիս**:
- Ռեսպոնդենտների պատասխաններում մեծ տարբերություններ նկատվում են ըստ տարածքների: Մասնավորապես, Երեւանի ռեսպոնդենտների շրջանում ավելի շատ են բացասաբար եւ արմատապես տրամադրված մարդիկ: Այստեղ նկատելիորեն ավելի շատ են այն ռեսպոնդենտները, ովքեր կարծում են, որ **իշխանությունները ԿԿ համակարգի ներդրմամբ իրենց թալանելու եւ կողոպտելու նոր ձեւ են մշակել** (22%) եւ որ այս բարեփոխումները **պետության համար փող հայթայթելու միջոց են** (15%):

### 3.1.4 <u>Տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին</u>

Այս հարցը տալիս Խորհրդատուն **կարդացել է պատասխանների տարբերակները** եւ ռեսպոնդենտներին առաջարկվել է ընտրել դրանցից մեկը: Պատասխանների տարբերակները եղել են.

- **ՄԻԱՅՆ ՊԱՐՏԱԴԻՐ** մասնակցության սկզբունքով
- **ՄԻԱՅՆ ԿԱՄԱՎՈՐ** մասնակցության սկզբունքով
- **ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ**, **ԵՎ ԿԱՄԱՎՈՐ** մասնակցության սկզբունքով
- Չգիտեն / դժվարացել են պատասխանել:

**Գծապատկեր 9 - Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների մասին**

| Հարց 4 | → | **Ի՞նչ սկզբունքներով է գործելու կուտակային կենսաթոշակային համակարգը** |
|---|---|---|

*! Ռեսպոնդենտների համար պատասխանների տարբերակներ ընթերցվել են*

***! Ճիշտ պատասխանն է՝ եւ պարտադիր, եւ կամավոր***

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Միայն պարտադիր | ▶ | 52% | 45% | 48% | 44% | 50% |
| Միայն կամավոր | ▶ | 5% | 7% | 4% | 7% | 6% |
| **Եվ պարտադիր, եւ կամավոր** | ▶ | 10% | 10% | 12% | 11% | 8% |
| Չգիտեն / դժվ. են պատասխանել | ▶ | 19% | 24% | 14% | 21% | 25% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | ▶ | 15% | 14% | 22% | 17% | 10% |
| **Ընդամենը** | | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Միայն պարտադիր | 70% | 34% | 39% | 57% | 33% |
| Միայն կամավոր | 5% | 6% | 8% | 6% | 7% |
| **Եվ պարտադիր, եւ կամավոր** | 7% | 19% | 4% | 9% | 11% |
| Չգիտեն / դժվ. են պատասխանել | 10% | 25% | 31% | 17% | 29% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | 8% | 16% | 19% | 11% | 20% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

- ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների (եւ պարտադիր, եւ կամավոր) մասին ճշգրիտ պատկերացում ունեն ռեսպոնդենտների 10%-ը: **Համեմատության համար**՝ 2010թ.-ին այս ցուցանիշը եւս կազմում էր 10%: Այս հարցում առաջադիմություն չկա:
- Այն, որ ԿԿ համակարգը գործելու է եւ պարտադիր, եւ կամավոր սկզբունքով՝ տղամարդիկ եւ կանայք տեղյակ են նույն չափով (10%):
- Այս հարցի շուրջ տեղեկացվածության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Արարատի մարզում (19%), իսկ ամենացածրը՝ Կոտայքի մարզում (4%): Երեւանում ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների շուրջ անտեղյակ ռեսպոնդենտները քիչ են (10%՝ միջին 22%-ի դիմաց): Սակայն այս «տեղյակ» ռեսպոնդենտները համալրել են այն մարդկանց շարքերը, ովքեր կարծում են, թե ԿԿ համակարգը գործելու է միայն պարտադիր սկզբունքով:

Այն, որ ռեսպոնդենտների գրեթե կեսը (48%) մտածում է, որ ԿԿ համակարգը ներդրվում է **միայն պարտադիր սկզբունքով** եւ մարդկանց այլընտրանք թողնված չէ, արդեն իսկ հանդիսանում է մարդկանց բացասական (քննադատական) կարծիքների կատալիզատոր: Ուստի պետք է հավելյալ ջանքեր գործադրել ԿԿ համակարգի ներդրման սկզբունքները հանրության ավելի ճանաչելի դարձնելու հարցում:

Պարտադիր ԿԿ համակարգի մասնակից ռեսպոնդենտներն ավելի լավ են տեղյակ ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների մասին, քան բոլորը ռեսպոնդենտները միասին վերցրած: Սակայն այս հարցում տեղեկացվածության 19% ցուցանիշը պետք է գնահատել որպես ցածր, քանի որ այս խմբի ռեսպոնդենտները հանդիսանում են կենսաթոշակային բարեփոխումների ուղղակի շահառուները:

### 3.1.5 <u>Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասին</u>

#### *3.1.5.1 Տեղեկացվածությունը պարփադիր կուփակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկեփի մասին*

Հետազոտությունն իրականացվել է պարտադիր ԿԿ համակարգի գործարկման պահին: Հաջորդիվ բերված հարցերը եւ նրանց պատասխանները լավագույնս ցույց են տալիս, թե ԿԿ համակարգի մասին տեղեկացվածության ինչպիսի մակարդակով է Հայաստանի հանրությունը մտնում փոփոխությունների փուլ:

Պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետը ճշգրիտ գիտեն ռեսպոնդենտների 44%-ը: Առաջին հայացքից սա կարող է թվալ լավ ցուցանիշ, եթե հաշվի առնենք, որ պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցները կազմում են ռեսպոնդենտների ընդամենը 15%-ը: Սակայն երբ դիտարկում ենք միայն այդ խումբն առանձին, ապա պարզվում է, որ նրանց ընդամենը 60%-ն է տեղյակ պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին: Դա արդեն վատ ցուցանիշ է, քանի որ անուղղակիորեն

կարելի է ենթադրել, որ պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների 40%-ը այդ համակարգի ներդրման պահին անգամ չգիտեն, որ իրենք արդեն դարձել են նոր կենսաթոշակային համակարգի մասնակից:

**Գծապատկեր** 10 - **Տեղեկացվածությունը պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին**

| Հարց 5 | → | **Ե՞րբ է սկսելու գործել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը** |
|---|---|---|

*! Ռեսպոնդենտների համար պատասխանների տարբերակներ չեն ընթերցվել*
*! **Ճիշտ պատասխանն է՝** 2014թ. (**կամ ավելի կոնկրետ՝** 01 **Հունվար**, 2014թ.)*




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| 2010-2013 | 0.5% | 0.4% | 1% | 0.2% | 0.4% |
| 2014-ին | 49% | 40% | 44% | 42% | 45% |
| 2015-2023 | 1% | 1% | 1% | 1% | 1% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 12% | 13% | 14% | 11% | 13% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | 24% | 31% | 18% | 29% | 31% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխում ների մասին | 15% | 14% | 22% | 17% | 10% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| 2010-2013 | 1% | 1% | - | 0.3% | 1% |
| 2014-ին | 59% | 43% | 30% | 50% | 34% |
| 2015-2023 | 1% | 1% | 1% | 1% | 0.2% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 17% | 8% | 12% | 15% | 9% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | 15% | 32% | 39% | 23% | 37% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխում ների մասին | 8% | 16% | 19% | 11% | 20% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

- Պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի (01.01.2014թ.) մասին ճշգրիտ տեղեկություն ունեն ռեսպոնդենտների 35%-ը: Եվս 9%-ի պատասխանները որոշ վերապահումներով կարելի է համարել ճիշտ, որոնք որպես պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետ նշել են 2014թ.-ը, սակայն կոնկրետ չեն նշել, թե որ օրը: Պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին

հանրային տեղեկացվածությունը 2010թ.-ի համեմատ արձանագրել է ակնհայտ առաջընթաց: **Համեմատության համար՝** 2010թ.-ին այս ցուցանիշը կազմում էր 4%:

- Պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին ավելի լավատեղյակ են տղամարդիկ (49%), քան կանայք (40%):
- Պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին ավելի լավատեղյակ են Երեւանում (59%), իսկ ամենից քիչ տեղյակ՝ Կոտայքի մարզում (30%):
- Պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին ավելի լավատեղյակ են քաղաքային բնակավայրերում (50%), իսկ ամենից քիչ տեղյակ՝ գյուղերում (34%):

### 3.1.5.2 *Տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր մասնակիցների մասին*

Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցները պետք է բավարարեն 2 պայման. ա) ունենա վարձու աշխատանք (լինեն նոտար կամ Ա/Ձ), եւ բ) ծնված լինեն 01.01.1974թ.-ին եւ դրանից հետո: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այս հարցում մարդկանց տեղեկացվածությունը ֆրագմենտավորված է: Ոմանք գիտեն միայն վարձու աշխատանք ունենալու պայմանը (17%), ոմանք էլ՝ միայն տարիքային սահմանափակումը (20%): Սակայն **լիարժեք տեղեկացվածություն ունեն ռեսպոնդենտների միայն** 8%-**ը**:

**Գծապատկեր** 11 - **Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի պարտադիր մասնակիցների մասին**

| Հարց 6 | → | **Կուտակային կենսաթոշակային համակարգը ու՞մ համար է պարտադիր** |
|---|---|---|

*! Ռեսպոնդենտների համար պատասխանների տարբերակներ չեն ընթերցվել*

***! Ճիշտ պատասխանն է՝ բոլոր անձանց համար, ովքեր ունեն աշխատանք եւ ծնվել են** 01.01.1974**թ.-ին եւ դրանից հետո***

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Բոլորի համար անխտիր | ▸ | 3% | 3% | 3% | 3% | 3% |
| **Բոլոր անձանց համար, ովքեր ունեն աշխատանք եւ ծնվել են** 01.01.1974**թ.-ին եւ դրանից հետո** | ▸ | 8% | 8% | 7% | 8% | 8% |
| Բոլոր անձանց համար, ովքեր ունեն աշխատանք | ▸ | 17% | 16% | 20% | 18% | 14% |

| Պատասխաններ | | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Բոլոր անձանց համար, ովքեր ծնվել են 01.01.1974թ.-ից հետո | ▶ | 21% | 19% | 15% | 16% | 24% |
| Այլ | ▶ | 5% | 4% | 8% | 4% | 4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | ▶ | 7% | 5% | 7% | 6% | 5% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | ▶ | 24% | 31% | 18% | 29% | 31% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխում ների մասին | ▶ | 15% | 14% | 22% | 17% | 10% |
| **Ընդամենը** | | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Բոլորի համար անխտիր | ▶ | 6% | 2% | 2% | 4% | 1% |
| **Բոլոր անձանց համար, ովքեր ունեն աշխատանք եւ ծնվել են** 01.01.1974**թ.-ին եւ դրանից հետո** | ▶ | 16% | 6% | 2% | 11% | 3% |
| Բոլոր անձանց համար, ովքեր ունեն աշխատանք | ▶ | 12% | 26% | 11% | 15% | 20% |
| Բոլոր անձանց համար, ովքեր ծնվել են 01.01.1974թ.-ից հետո | ▶ | 32% | 11% | 16% | 25% | 11% |
| Այլ | ▶ | 6% | 3% | 6% | 5% | 4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | ▶ | 6% | 6% | 6% | 6% | 5% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | ▶ | 15% | 32% | 39% | 23% | 37% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխում ների մասին | ▶ | 8% | 16% | 19% | 11% | 20% |
| **Ընդամենը** | | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Տեղեկացվածության 8% ցուցանիշը շատ ցածր է, եթե նկատի ունենանք այն, որ 2010թ.-ին ԿԿ համակարգի պարտադիր մասնակիցների մասին տեղեկացվածությունը կազմում էր 6%: Ստացվում է, որ 3 տարվա ընթացքում այս հարցում մարդկանց տեղեկացվածությունը բարձրացել է շատ փոքր չափով:

**Ցածր է նաեւ առանձին վերցրած պարտադիր ԿԿ համակարգի մասնակից ռեսպոնդենտների տեղեկացվածությունը**: **Ընդամենը** 13%-**ը ճշգրիտ գիտի, թե ովքեր են հանդիսանում պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցներ**: Հենց այս ցուցանիշով է բացատրվում ԿԿ համակարգի նկատմամբ դժգոհությունների մի զգալի մասը: Հարցումների ընթացքում **բազմաթիվ ռեսպոնդենտներ բողոքել են բարեփոխումներից եւ դեմ են արտահայտվել դրանց իրականացմանը**, **նշելով**, **որ եթե իրենք չունեն աշխատանք եւ եկամուտ**, **ապա որտեղի՞ց կամ ինչու՞ պետք է կատարեն կուտակային վճարներ**:

- Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների մասին տղամարդկանց եւ կանանց տեղեկացվածությունը նույնն է (8%):
- Ըստ տարածքների, սակայն, ակնհայտ է, որ Երեւանում մարդիկ զգալիորեն ավելի լավատեղյակ են պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների մասին (16%), քան մարզերում (առավելագույն ցուցանիշը Արարատի մարզում է՝ 6%):
- Ռեսպոնդենտները քաղաքներում ավելի տեղեկացված են պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների մասին (11%), քան գյուղերում (3%):

### *3.1.5.3 Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին վճարող սուբյեկտների մասին*

Պարտադիր ԿԿ համակարգին վճարողների մասին տեղեկությունը եւս բաղկացած է երկու մասից՝ վճարում կատարելու է անձը ինքը եւ պետությունը: Ընդ որում՝ պետության ֆինանսական մասնակցությունը այս գործընթացում շատ կարեւոր հանգամանք է, քանի որ այն զգալիորեն մեղմացնում է մարդկանց դժգոհ տրամադրությունները (այդ մասին խոսվում է ներքեւում՝ վերաբերմունքի

հարցերում): Ցավոք, **ամեն երրորդ ռեսպոնդենտը** (34%) **կարծում է, որ պարտադիր ԿԿ համակարգին վճարում կատարելու է միայն մասնակից անձը** եւ չգիտի պետության մասնակցության մասին: Ճիշտ պատասխանը գիտեն միայն 16%-ը: **Համեմատության համար**՝ 2010թ.-ի համեմատ այդ ցուցանիշն աճել է 4 անգամ (2010թ.-ին՝ 4%), սակայն դա բավարար չէ, որպեսզի օբյեկտիվորեն արժեւորվի պետության պատասխանատվությունը եւ մասնակցությունը կենսաթոշակային բարեփոխումներին: Այս հարցում պատկերը մտահոգիչ է նաեւ պարտադիր ԿԿ համակարգի մասնակից ռեսպոնդենտների դեպքում: Այստեղ տեղեկացվածությունը հասնում է մինչեւ 24%-ի: Սակայն 43%-ը մտածում է, թե իր ապագա կենսաթոշակի գումարը միայն ինքն է կուտակելու: Անտեղյակության այսպիսի մասշտաբները ի չիք են դարձնում կենսաթոշակային բարեփոխումներում պետության գլխավոր խաղաթղթերից մեկը: Մինչդեռ հաջորդ բաժիններում (վերաբերմունքի հարցեր) կարելի է ականատես լինել, որ ռեսպոնդենտների 61%-ը կարեւորում է եւ դրական է վերաբերվում պետության ֆինանսական մասնակցության հարցին:

**Գծապատկեր** 12 - **Տեղեկացվածությունը պարտադիր ԿԿ համակարգին վճարող սուբյեկտների մասին**

| Հարց 7 | → | **Ո՞վ է վճարում կատարելու պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին** |
|---|---|---|

*! Ռեսպոնդենտների համար պատասխանների տարբերակներ չեն ընթերցվել*
***! Ճիշտ պատասխանն է՝ անձը ինքը եւ պետությունը***




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| **Պատասխաններ** | **Սեռ** | | **Տարիք** | | |
|---|---|---|---|---|---|
| | **Արական** | **Իգական** | 18-24 | 25-40 | 41-62 |
| Անձը ինքը | 37% | 32% | 37% | 30% | 36% |
| Պետությունը | 1% | 1% | | 2% | 1% |
| Գործատուն | 0.2% | 1% | | 1% | 0% |
| **Անձը ինքը եւ պետությունը** | 17% | 15% | 13% | 16% | 16% |
| Այլ | 2% | 1% | 2% | 1% | 1% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 6% | 5% | 7% | 5% | 5% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | 24% | 31% | 18% | 29% | 31% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխում ների մասին | 15% | 14% | 22% | 17% | 10% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Անձը ինքը | 52% | 22% | 28% | 42% | 21% |
| Պետությունը | 1% | 1% | 1% | 1% | 1% |
| Գործատուն | 1% | 0.3% | 0.3% | 1% | 0.2% |
| **Անձը ինքը եւ պետությունը** | 18% | 23% | 6% | 17% | 14% |
| Այլ | 2% | 1% | 1% | 1% | 1% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 4% | 6% | 6% | 5% | 6% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | 15% | 32% | 39% | 23% | 37% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխում ների մասին | 8% | 16% | 19% | 11% | 20% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

- Պարտադիր ԿԿ համակարգին վճարողներից տեղեկացվածության հարցում տղամարդկանց եւ կանանց մոտ առկա են փոքր տարբերություններ՝ համապատասխանաբար 17% եւ 15%:
- Ըստ տարածքների ստացվել է ուշագրավ վիճակագրություն: Պարզվում է, որ Արարատի մարզում ավելի տեղյակ են պարտադիր ԿԿ համակարգին վճարողների մասին (23%), քան Երեւանում (18%):
- Ռեսպոնդենտները քաղաքներում ավելի տեղեկացված են պարտադիր ԿԿ համակարգին վճարողների մասին (17%), քան գյուղերում (14%):

### *3.1.5.4 Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային վճարների չափի մասին*

Պարտադիր կուտակային վճարման չափի մասին տեղեկությունը պարտադիր ԿԿ համակարգի ամենաբարդ պայմաններից մեկն է: Այն բարդ է անգամ այն մարդկանց համար, ովքեր գիտեն եւ՛ ԿԿ համակարգի մասնակցի, եւ՛ պետության վճարումների մասին:

**Գծապատկեր** 13 - **Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային վճարների չափի մասին**

| Հարց 8 | → | **Որքա՞ն են կազմում պարտադիր կուտակային վճարների չափերը** |
|---|---|---|

*! Ռեսպոնդենտների համար պատասխանների տարբերակներ չեն ընթերցվել*

***! Ճիշտ պատասխանն է՝ պարտադիր կուտակողի բազային եկամուտի 10%-ի չափով, ընդ որում՝ եթե բազային եկամուտը ցածր է 500,000 դրամից, ապա անձը վճարում է 5% եւ եւս այդքան էլ՝ պետությունը, իսկ եթե բազային եկամուտը բարձր է 500,000 դրամից, ապա պետությունը վճարում է 25,000 դրամ, իսկ անձը պետք է վճարի այնքան, մինչեւ լրացվի ամսական բազային եկամտի 10%-ը***

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների պատասխանները**



**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Անձը ինքը՝ ամսական աշխատավարձի 5%-ի չափով | 20% | 18% | 21% | 15% | 21% |
| Անձը ինքը՝ ամսական աշխատավարձի 5%-ի չափով եւ պետությունը եւս 5% | 14% | 13% | 12% | 11% | 15% |
| **Ճիշտ պատասխան (տես բացատրությունը)** | 5% | 3% | 2% | 5% | 4% |
| Այլ | 8% | 7% | 11% | 7% | 6% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 15% | 14% | 13% | 16% | 13% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | 24% | 31% | 18% | 29% | 31% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | 15% | 14% | 22% | 17% | 10% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Անձը ինքը՝ ամսական աշխատավարձի 5%-ի չափով | 29% | 11% | 16% | 23% | 12% |
| Անձը ինքը՝ ամսական աշխատավարձի 5%-ի չափով եւ պետությունը եւս 5% | 12% | 24% | 4% | 13% | 14% |
| **Ճիշտ պատասխան (տես բացատրությունը)** | 9% | 3% | 1% | 6% | 1% |
| Այլ | 12% | 4% | 7% | 10% | 4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 16% | 11% | 17% | 15% | 13% |
| Չգիտեն պարտադիր կուտակ. կենսաթոշ. բաղադրիչի մասին | 15% | 32% | 39% | 23% | 37% |
| Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին | 8% | 16% | 19% | 11% | 20% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Պարտադիր կուտակային վճարների հաշվարկման բարդությունը կայանում է նրանում, որ **կա բազային եկամտի շեմ՝** 500,000 **դրամ**, **որից ներքեւ եւ վերեւ կուտակային վճարների չափերի հաշվարկման բանաձեւերը տարբեր են**: Ռեսպոնդենտները ծանոթ չեն «բազային եկամուտ» ձեւակերպմանը: Դրա փոխարեն նրանք օգտագործում են «աշխատավարձ» բառը, որի ներքո հասկանում են այն գումարը, որը նրանք փաստացի (եկամտային հարկը պահելուց հետո) ստանում են ամեն ամիս: **Եթե հաշվի չառնենք «բազային եկամուտ» եւ «զուտ աշխատավարձ» հասկացությունների տարբերությունը**, ապա պարտադիր կուտակային վճարների չափի մասին ռեսպոնդենտների տեղեկացվածությունը կազմում է ընդամենը 4%:

- Պարտադիր կուտակային վճարների չափի մասին տղամարդկանց եւ կանանց մոտ առկա են փոքր տարբերություններ՝ համապատասխանաբար 5% եւ 3%:
- Պարտադիր կուտակային վճարների չափի մասին ավելի տեղյակ են Երեւանում (9%): Ի հակադրություն այս պատկերի, Կոտայքի մարզում չի հանդիպել գեթ մեկ ռեսպոնդենտ, ով տեղյակ է պարտադիր կուտակային վճարների չափի մասին:
- Ռեսպոնդենտները քաղաքներում ավելի տեղեկացված են պարտադիր կուտակային վճարների չափի մասին (5%), քան գյուղերում (1%):

Ռեսպոնդենտների մոտ «բազային եկամտի» եւ «զուտ աշխատավարձի» նույնացման (նույնական ընկալման) արդյունքում այսօր առաջացել է մի հակափաստարկ, որը լայնորեն օգտագործվում է կենսաթոշակային բարեփոխումների դեմ: Խոսքը գնում է «աշխատավարձի 5%» ձեւակերպման մասին: **Ռեսպոնդենտների ճնշող մեծամասնությունն «աշխատավարձ» ասելով նկատի ունի այն գումարը, որն իրենք փաստացի ստանում են՝ արդեն հարկերը պահելուց հետո**: Սակայն **իրականում այդ** 5%-ը **պետք է հաշվարկվի այսպես կոչված «բազային եկամտի» նկատմամբ**, որը ներառում է նաեւ

**եկամտային հարկը**: Այդ դեպքում **կուտակային վճարի մեծությունը ստացվում է պարտադիր կուտակողի զուտ աշխատավարձի** 5%-**ից ավելին**: Այս հանգամանքը բարեփոխումների ընդդիմախոսների կողմից օգտագործվում է հետեւյալ մեկնաբանմամբ. *պարտադիր կուտակային վճարի չափը ոչ թե 5% է, այլ իրականում ավելի բարձր: Եվ պետությունը, կուտակային վճարի չափը ներկայացնելով որպես 5%, իրականում մարդկանց գցում է թյուրիմացության մեջ:* Այս հարցում բարեփոխումների ընդդիմախոսներին կարելի է հասկանալ, քանի որ 2013թ.-ին իրականացված ամբողջ տեղեկատվական արշավի ժամանակ անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել այն հարցին, թե աշխատավարձի որ թվի (բազային թե զուտ) վրա է հաշվարկվելու այդ 5%-ը:

### 3.1.5.5 *Տեղեկացվածությունը անհատական կենսաթոշակային հաշիվների մասին*

**Գծապատկեր** 14 - **Տեղեկացվածությունը անհատական կենսաթոշակային հաշիվների մասին**

| Հարց 9 | → | **Որտե՞ղ են կուտակվելու անձանց պարտադիր կուտակային վճարները** |
|---|---|---|

*! Ռեսպոնդենտների համար պատասխանների տարբերակներ չեն ընթերցվել*

***! Ճիշտ պատասխանն է՝ անհատական կենսաթոշակային հաշվում***




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Անհատական կենսաթոշակային հաշվում | 5% | 5% | 5% | 6% | 4% |
| Պետական բյուջեում | 4% | 2% | 3% | 1% | 4% |
- **Ընդհանուրի** 4%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 6%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:
- **Ընդհանուրի** 12%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 18%-**ը**: Տվել են իրենց բացասական վերաբերմունքի ամենատարբեր բացատրություններ, այդ թվում՝ ա) կարծում են, որ ԿԿ համակարգը Հայաստանի ներկա պայմաններում չի կարող աշխատել, բ) չեն ուզում որեւէ կուտակում անել, գ) պարզապես դեմ են առանց պատճառների:

### 3.2.4 Վերաբերմունքը կուտակային կենսաթոշակային համակարգն առանձին տարիքային խմբի համար պարտադիր սահմանելու նկատմամբ

Հաջորդիվ հետեւող հարցերում ռեսպոնդենտները ոչ միշտ են տվել պատասխաններ, որոնք բխում են հարցի էությունից: ԿԿ համակարգի պայմանների վերաբերյալ բացասական վերաբերմունք հայտնելիս, որպես կանոն, ռեսպոնդենտները կրկնվում են՝ նշելով իրենց անվստահությունը իշխանությունների նկատմամբ, իրենց անհամաձայնությունը ԿԿ համակարգի ներդրման հետ, ապագայի նկատմամբ դրական սպասումների եւ ակնկալիքների բացակայությունը եւ այլն: ԿԿ համակարգի պայմանների վերաբերյալ, որոնց մասին տեղեկացվածությունը ի սկզբանե եղել է ցածր, բացասական վերաբերմունքի հիմնավոր բացատրությունները քիչ են: Այդ իսկ պատճառով հետայսու ներկայացված հարցերում մեկնաբանություններ են կատարվել ռեսպոնդենտների այն պատասխանների մասով, որոնք ըստ էության են եւ վերաբերվում են կոնկրետ հարցին:

**Գծապատկեր** 32 - **Վերաբերմունքը ԿԿ համակարգը առանձին տարիքային խմբի համար պարտադիր սահմանելու նկատմամբ**

| | | |
|---|---|---|
| Հարց 27 | → | **Կուտակային կենսաթոշակային համակարգը պարտադիր է լինելու միայն առանձին տարիքային խմբի համար՝** 01.01.1974**թ.-ին եւ դրանից հետո ծնված բոլոր վարձու աշխատողների, նոտարների եւ Ա/Ձ-ների համար: Ճի՞շտ եք համարում այդ մոտեցումը** |

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**



**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ: Արական | Սեռ: Իգական | Տարիք: 18-24 | Տարիք: 25-40 | Տարիք: 41-62 |
|---|---|---|---|---|---|
| Այո | 28% | 28% | 36% | 29% | 24% |
| Ոչ | 43% | 49% | 38% | 47% | 50% |
| Միեւնույն է | 6% | 4% | 4% | 4% | 6% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 23% | 19% | 22% | 20% | 20% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ: Երեւան | Տարածքներ: Արարատ | Տարածքներ: Կոտայք | Բնակավայրի տիպ: Քաղաք | Բնակավայրի տիպ: Գյուղ |
|---|---|---|---|---|---|
| Այո | 18% | 40% | 25% | 24% | 34% |
| Ոչ | 57% | 34% | 51% | 52% | 40% |
| Միեւնույն է | 6% | 4% | 5% | 5% | 4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 20% | 22% | 19% | 19% | 22% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների մոտ ԿԿ համակարգը առանձին տարիքային խմբի համար պարտադիր սահմանելու նկատմամբ բացասական վերաբերմունքն ունի հետեւյալ բացատրությունները.

- **Ընդհանուրի** 10%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 22%-**ը**: Անկախ նրանից, թե ինչ վերաբերմունք ունեն ԿԿ համակարգի նկատմամբ (կողմ են, թե դեմ), այս խմբի ռեսպոնդենտները կարծում են, որ **օրենքը չպետք է խտրական վերաբերմունք ցույց տա մարդկանց՝ կախված նրանց տարիքից**: Կարծում են, որ եթե ԿԿ համակարգի պարտադիր բաղադրիչը այնուամենայնիվ գործելու է, ապա այն պետք է պարտադիր լինի բոլորի համար:
- **Ընդհանուրի** 7%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 15%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:
- **Ընդհանուրի** 30%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 63%-**ը**: Հարցին տվել են պատասխաններ, որոնք այնքան էլ չեն վերաբերվում բուն հարցին: Ավելի հաճախ հանդիպում են հետեւյալ հայտարարությունները. ա) իշխանությունների նկատմամբ վստահություն չկա, բ) աշխատավարձերը ցածր են, գ) ապագայի նկատմամբ անվստահությունը եւ դրական սպասումների բացակայությունը:

### 3.2.5 Վերաբերմունքը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին վճարում կատարողների նկատմամբ

**Գծապատկեր** 33 - **Վերաբերմունքը պարտադիր ԿԿ համակարգին վճարում կատարողների նկատմամբ**

| | | |
|---|---|---|
| Հարց 28 | → | **Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում կուտակում կատարելու են անձը ինքը եւ պետությունը: Ճի՞շտ եք համարում այդ մոտեցումը** |

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | **Արական** | **Իգական** | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 60% | 62% | 75% | 65% | 54% |
| Ոչ | 33% | 31% | 21% | 30% | 36% |
| Միեւնույն է | 2% | 2% | 1% | 1% | 3% |
| Չգիտեմ / դժվարացել են պատասխանել | 6% | 5% | 3% | 4% | 7% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | **Երեւան** | **Արարատ** | **Կոտայք** | **Քաղաք** | **Գյուղ** |
| Այո | 44% | 66% | 75% | 56% | 70% |
| Ոչ | 51% | 26% | 19% | 38% | 22% |
| Միեւնույն է | 3% | 1% | 1% | 2% | 1% |
| Չգիտեմ / դժվարացել են պատասխանել | 2% | 8% | 6% | 4% | 7% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների մեծ մասը դրական է վերաբերվում պարտադիր ԿԿ համակարգին վճարումներ կատարելու սխեմային, մասնավորապես՝ այդ հարցում պետության մասնակցության հանգամանքին: Ընդամենը 32%-ն են բացասական վերաբերմունք հայտնել պարտադիր ԿԿ համակարգին վճարումների կատարման սխեմայի նկատմամբ, որն ունի հետեւյալ բացատրությունները.

- **Ընդհանուրի** 7%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 21%-**ը**: Գտնում են, որ կուտակում պետք է անի **միայն պետությունը**: Շատերը մտածում են, որ աշխատողներն իրենց աշխատավարձից պահվող եկամտահարկի մեջ (դրույքը՝ 24.4%) արդեն վճարել են սոցվճար եւ կարիք չկա աշխատողներից նոր գումար պահելու:

- **Ընդհանուրի** 7%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 21%-**ը**: Չեն հավատում, որ պետությունը որեւէ գումար կվճարի պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների հաշիվներին: Նման մտայնությունը գալիս է իշխանությունների նկատմամբ վստահության իսպառ բացակայությունից:
- **Ընդհանուրի** 4%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 13%-**ը**: Գտնում են, որ **պետությունը պետք է կուտակի ավելի շատ**, քան համակարգի մասնակիցները:
- **Ընդհանուրի** 2%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 6%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:
- **Ընդհանուրի** 12%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 38%-**ը**: Հարցին տվել են պատասխաններ, որոնցով ավելի շուտ արտահայտել են իրենց դժգոհությունը ԿԿ համակարգի ներդրման նկատմամբ: Ավելի հաճախ հանդիպում են հետեւյալ հայտարարությունները. ա) իշխանությունների նկատմամբ վստահություն չկա, բ) իշխանությունները թող ոչ մարդկանցից փող հավաքեն, ոչ էլ իրենք ընկնեն ֆինանսական պարտավորությունների տակ, գ) որեւէ հավատ չունեն կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ:

### 3.2.6 Վերաբերմունքը պարտադիր կուտակային վճարների չափի վերաբերյալ

**Գծապատկեր** 34 - **Վերաբերմունքը պարտադիր կուտակային վճարների չափի վերաբերյալ**

| | | |
|---|---|---|
| Հարց 29 | → | **Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում գործում են վճարների տարբեր սահմանաչափեր: Եթե աշխատողի ամսական աշխատավարձը ցածր է** 500,000 **դրամից, ապա նա իր կուտակային հաշվին է փոխանցում աշխատավարձի** 5%-**ը եւ եւս** 5% **իր կողմից փոխանցում է պետությունը: Եթե աշխատողի ամսական աշխատավարձը բարձր է** 500,000 **դրամից, ապա պետությունը վճարում է ընդամենը** 25,000 **դրամ, իսկ աշխատողը պետք է վճարի այնքան, մինչեւ լրացվի ամսական աշխատավարձի** 10%-**ը: Խելամի՞տ սահմանաչափեր են սահմանված** |

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | ▶ | 47% | 44% | 53% | 46% | 41% |
| Ոչ | ▶ | 41% | 40% | 37% | 40% | 41% |
| Միեւնույն է | ▶ | 4% | 3% | 2% | 2% | 5% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | ▶ | 9% | 13% | 9% | 12% | 13% |
| **Ընդամենը** | | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | ▶ | 34% | 49% | 53% | 39% | 54% |
| Ոչ | ▶ | 57% | 31% | 32% | 47% | 30% |
| Միեւնույն է | ▶ | 4% | 4% | 2% | 3% | 4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | ▶ | 6% | 17% | 13% | 11% | 13% |
| **Ընդամենը** | | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների մոտ պարտադիր կուտակային վճարների չափի նկատմամբ բացասական վերաբերմունքն ունի հետեւյալ բացատրությունները.

- **Ընդհանուրի** 12%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 30%-**ը**: Գտնում են, որ պետությունը **պետք է պարտադիր ԿԿ համակարգի մասնակցի վճարմանը հավասար վճարում անի՝ անկախ աշխատավարձի մեծությունից**: Մասնակցի աշխատավարձի մեծությունից կախված պետության մասնակցության տարբեր չափերը եւս մեկ **խտրական վերաբերմունք է**՝ այս անգամ ամսական 500,000 դրամից ավելի աշխատավարձ ստացող անձանց նկատմամբ:
- **Ընդհանուրի** 3%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 8%-**ը**: Գտնում են, որ պարտադիր ԿԿ համակարգի մասնակցի վճարման չափը բարձր է, **այն պետք է** 5%-**ից ցածր լիներ**:
- **Ընդհանուրի** 2%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 4%-**ը**: Գտնում են, որ պետության կուտակային վճարը պետք է ավելի բարձր լիներ, քան մասնակցի վճարման չափը:
- **Ընդհանուրի** 4%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 10%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:
- **Ընդհանուրի** 19%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 48%-**ը**: Հարցին տվել են բազմաթիվ պատասխաններ, որոնցից ավելի հաճախ հանդիպում են հետեւյալ հայտարարությունները. ա) կուտակային վճարների չափերը անարդար են սահմանված, բայց ինչու՞ եւ ի՞նչ չափով՝ պատասխան չկա, բ) աշխատավարձերն այնքան ցածր են, որ դրանցից 5% պահումը ներկա պահին ֆինանսական խնդիր է ստեղծելու մասնակցի համար, իսկ ապագայում էլ չի լուծելու բարեկեցիկ ծերության համար անհրաժեշտ թոշակի մեծության հարցը, գ) ընդհանրապես դեմ են ԿԿ համակարգի ներդրմանը եւ նրա բոլոր պայմաններին:

### 3.2.7 <u>Վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ</u>

Պարտադիր ԿԿ համակարգի պայմաններից ամենից քիչ թվով դժգոհություններ ստացվել են ներքոհիշյալ պրոցեդուրալ հարցերի վերաբերյալ:

**Գծապատկեր** 35 - **Վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ**

| | | |
|---|---|---|
| Հարց 30 | → | **Կենսաթոշակային վճարումների կուտակման համար անձինք պետք է բացեն անհատական կենսաթոշակային հաշիվ, ընտրեն կենսաթոշակային ֆոնդ եւ ֆոնդի կառավարիչ: Դա կարելի է անել ինտերնետի միջոցով՝ «Իմ հաշիվը» էջում, կամ էլ կարելի է այցելել հաշվի օպերատորի գրասենյակ, օրինակ՝ Հայփոստի բաժանմունք: Արդյո՞ք այս տարբերակները հնարավորինս հարմար կլինեն մարդկանց, որպեսզի նրանք հեշտությամբ իրականացնեն կենսաթոշակային հաշվի բացման հետ կապված գործողությունները** |

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 71% | 74% | 77% | 78% | 68% |
| Ոչ | 16% | 14% | 14% | 14% | 15% |
| Միեւնույն է | 3% | 2% | 2% | 1% | 4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 10% | 9% | 7% | 6% | 13% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 66% | 75% | 78% | 72% | 75% |
| Ոչ | 25% | 10% | 10% | 18% | 10% |
| Միեւնույն է | 3% | 3% | 2% | 3% | 2% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 6% | 12% | 11% | 8% | 13% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Այս հարցում բացասական վերաբերմունք ունեցող ռեսպոնդենտների պատասխանների մեծ մասը կապ չունի հարցի էության հետ: Տպավորություն է, որ անհատական կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու կարգից դժգոհ են այն ռեսպոնդենտները, ովքեր դժգոհ են առհասարակ ամբողջ կենսաթոշակային բարեփոխումներից:

- **Ընդհանուրի** 2%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 11%-**ը**: Գտնում են, որ մարդիկ այնքան պարապ չեն կամ ժամանակ չունեն, որ զբաղվեն թվարկված գործողություններով:
- **Ընդհանուրի** 1%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 9%-**ը**: Գտնում են, որ հնարավոր չի լինելու խուսափել քաշքշուկներից եւ հերթերից:
- **Ընդհանուրի** 1%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 9%-**ը**: Գտնում են, որ մարդիկ ինտերնետի միջոցով թվարկված գործողությունների կատարումը լավ միտք չէ, քանի որ շատերը չեն տիրապետում համակարգիչներին եւ ինտերնետից օգտվելու տեխնիկային:
- **Ընդհանուրի** 1%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 9%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:
- **Ընդհանուրի** 9%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 62%-**ը**: Տվել են բազմաթիվ պատասխաններ, որոնք հիմնականում կապված չեն հարցի հետ, այլ խոսում են կենսաթոշակային բարեփոխումներից այդ ռեսպոնդենտների ընդհանուր դժգոհության հետ:

Գծապատկեր 36 - Վերաբերմունքը հատուկ համակարգչային ծրագրի օգնությամբ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ կամ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ

| Հարց 31 | → | Եթե պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցը չգիտի, թե ինչպես ընտրել կենսաթոշակային ֆոնդ կամ ֆոնդի կառավարիչ, ապա նրա փոխարեն դա անում է նոր համակարգը՝ հատուկ համակարգչային ծրագրի օգնությամբ: Դա ընդունելի՞ մոտեցում է |
|---|---|---|

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 54% | 52% | 59% | 56% | 48% |
| Ոչ | 35% | 36% | 36% | 35% | 36% |
| Միեւնույն է | 3% | 4% | 1% | 3% | 6% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 7% | 8% | 4% | 6% | 10% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 42% | 58% | 59% | 49% | 59% |
| Ոչ | 51% | 27% | 30% | 41% | 28% |
| Միեւնույն է | 3% | 5% | 4% | 4% | 3% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 4% | 11% | 7% | 6% | 10% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Այս հարցի շուրջ ռեսպոնդենտները չեն տվել իրենց դժգոհությունների հիմնավոր բացատրություններ:

- **Ընդհանուրի** 4%-**ը** կամ **այս կարգից դժգոհ ռեսպոնդենտների** 10%-**ը**: Նշել են, որ առանց իրենց՝ համակարգչի միջոցով պատահականորեն կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ կամ ֆոնդ ընտրելը իրենք դիտելու են որպես իրենց **իրավունքների խախտում**:
- **Ընդհանուրի** 2%-**ը** կամ **այս կարգից դժգոհ ռեսպոնդենտների** 5%-**ը**: Նշել են, որ կառավարությունը պարտավոր էր մարդկանց իրազեկել այնքան, որպեսզի մարդիկ ինքնուրույն կարողանային կատարել իրենց ընտրությունը:
- **Ընդհանուրի** 3%-**ը** կամ **այս կարգից դժգոհ ռեսպոնդենտների** 9%-**ը**: Չեն կարողացել հստակ նշել, թե ինչից են իրենք դժգոհ:

- **Ընդհանուրի** 27%-**ը կամ այս կարգից դժգոհ ռեսպոնդենտների** 76%-**ը**: Նշել են, որ միայն իրենք պետք է կատարեն իրենց կենսաթոշակային ֆոնդի կառավարչի եւ ֆոնդի ընտրությունը, սակայն չեն հստակեցրել, թե ինչ պետք է լինի, եթե իրենք չեն կարողանում դա անել:

### 3.2.8 Ռեսպոնդենտների՝ կենսաթոշակային ֆոնդում մասնակիցների ներդրման ընկալումը

**Գծապատկեր** 37 - **Ռեսպոնդենտների՝ կենսաթոշակային ֆոնդում մասնակիցների ներդրման ընկալումը**

| Հարց 32 | → | **Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի կենսաթոշակային խնայողությունները ներդրվելու են կենսաթոշակային ֆոնդում: Դա մասնակցի փայն է կենսաթոշակային ֆոնդում: Դուք Ձեզ կզգա՞ք որպես կենսաթոշակային ֆոնդի փայի սեփականատեր** |
|---|---|---|

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 33% | 41% | 50% | 40% | 31% |
| Ոչ | 51% | 42% | 38% | 44% | 48% |
| Միեւնույն է | 2% | 2% | 2% | 1% | 3% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 14% | 16% | 10% | 14% | 18% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 26% | 36% | 51% | 34% | 43% |
| Ոչ | 60% | 39% | 37% | 51% | 37% |
| Միեւնույն է | 2% | 3% | 1% | 2% | 3% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 12% | 22% | 12% | 14% | 18% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների 45%-ը հայտարարել է, որ իրենք չեն կարող իրենց զգալ փայատեր, քանի որ.

- **Ընդհանուրի** 9%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 21%-**ը**: Գտնում են, որ եթե մարդը չի կարող ոչ տնօրինել, ոչ էլ կառավարել իր «փայը», ապա ինչպե՞ս նա կարող է իրեն զգալ փայատեր: Դրանք ընդամենը բառեր են: Փայատեր կարելի է զգալ/լինել այն սեփականության մեջ, որը գտնվում է սեփականատիրոջ, եւ ոչ թե նրա կառավարիչի տնօրինման ներքո:

- **Ընդհանուրի** 2%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 5%-**ը**: Գտնում են, որ իրենց ներդրման չափը կենսաթոշակային ֆոնդում լինելու է այնքան չնչին, որ դրա նկատմամբ փայատեր զգալը լինելու է շատ դժվար կամ անհնար:
- **Ընդհանուրի** 6%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 12%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:
- **Ընդհանուրի** 28%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 62%-**ը**: Տվել են բազմաթիվ պատասխաններ, որոնց թվում առավել հաճախ հանդիպում են. ա) եթե իրենք վստահ են կամ հույս չունեն, որ այդ գումարները հետ են վերադարձվելու, ապա ինչպե՞ս կարող են իրենց զգալ գոյություն չունեցող գումարների փայատեր, բ) Հայաստանում հնարավոր չէ պետության հետ մտնել գործարքի մեջ եւ քեզ պաշտպանված զգաս, գ) իշխանությունների նկատմամբ վստահության պակասը չի կարող թույլ տալ, որ մարդիկ զգան իրենց խնայողությունների տեր:

### 3.2.9 Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ ունեցած վստահությունը

**Գծապատկեր 38 - Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ ունեցած վստահությունը**

| Հարց 33 | → | Կենսաթ. ֆոնդերը կառավարվելու են ֆոնդերի կառավարիչների կողմից, որոնք ֆոնդերի կառավարման երկարամյա փորձ ունեցող ընկերություններ են: Ունե՞ք վստահություն, որ անձանց կուտակումները գտնվելու են «ապահով ձեռքերում» |
|---|---|---|

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 36% | 32% | 42% | 35% | 29% |
| Ոչ | 55% | 54% | 47% | 54% | 56% |
| Միեւնույն է | 1% | 0.4% | 1% | 0.2% | 1% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 9% | 14% | 9% | 11% | 14% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 26% | 46% | 28% | 28% | 41% |
| Ոչ | 62% | 46% | 54% | 58% | 47% |
| Միեւնույն է | 2% | 1% | 0% | 1% | 0.4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 11% | 8% | 18% | 13% | 11% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների 54%-ի համար կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները ապահովության հույս չեն ներշնչում՝ հետեւյալ պատճառներով.

- **Ընդհանուրի** 25%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 47%-**ը**: Բացարձակ վստահություն չունեն կենսաթոշակային ֆոնդերի նկատմամբ: Նրանց չեն ճանաչում, նրանց հետ աշխատելու փորձ չունեն:
- **Ընդհանուրի** 22%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 40%-**ը**: Չեն վստահում առհասարակ ոչ մեկին՝ ոչ իշխանություններին, ոչ նրանց ընտրած կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին, բանկերին, ինչպես նաեւ իրենց ընկերներին, հարազատներին: Այս խմբում շատերը հիշում են ԽՍՀՄ փլուզման պահին իրենց կամ իրենց ծնողների կորցրած ավանդները եւ խնայողությունները եւ այդ պատճառով սկզբունքորեն դեմ են իրենց խնայողությունները այլ անձանց մոտ կամ կազմակերպություններում պահելուն:
- **Ընդհանուրի** 4%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 8%-**ը**: Բացարձակ վստահություն չունեն պետության նկատմամբ: Չվստահելով պետությանը՝ այս ռեսպոնդենտները չեն վստահում նաեւ իշխանությունների ընտրած կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին:
- **Ընդհանուրի** 3%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 5%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:

### 3.2.10 Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին/ֆոնդը փոխելու հնարավորությանը

**Գծապատկեր** 39 - **Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին/ֆոնդը փոխելու հնարավորությանը**

| Հարց 34 | → | Մասնակիցները կարող են ցանկացած ժամանակ փոխել կուտակային կենսաթոշակային ֆոնդը/ֆոնդի կառավարչին: Դա խելամի՞տ լուծում է |
|---|---|---|

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | ▶ | 74% | 80% | 87% | 82% | 71% |
| Ոչ | ▶ | 16% | 14% | 9% | 12% | 18% |
| Միեւնույն է | ▶ | 5% | 2% | 3% | 3% | 4% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | ▶ | 5% | 4% | 1% | 3% | 7% |
| **Ընդամենը** | | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 71% | 78% | 84% | 76% | 80% |
| Ոչ | 23% | 12% | 10% | 17% | 11% |
| Միեւնույն է | 5% | 3% | 2% | 4% | 2% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 2% | 7% | 5% | 3% | 6% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների ընդամենը 15%-ն բացասաբար վերաբերվում կենսաթոշակային ֆոնդի կառավարչին եւ/կամ ֆոնդը փոխելու իրենց ընձեռնված հնարավորությանը: Նրանց դժգոհության պատճառները հետեւյալն են.

- **Ընդհանուրի** 3%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 22%-**ը**: Ի սկզբանե տարբերություն չեն տեսնում կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների միջեւ: Նրանց մեկ անգամ կամ անընդհատ փոխելուց այս խմբի ռեսպոնդենտների մտահոգությունները չեն նվազում:
- **Ընդհանուրի** 3%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 17%-**ը**: Չեն վստահում կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներից եւ ոչ մեկին: Այսինքն՝ այս խումբը եւս տարբերություն չի դնում այդ կառավարիչների միջեւ եւ այդ իսկ պատճառով դրանց փոխելու հնարավորությունը գրավիչ պայման չի համարում:
- **Ընդհանուրի** 8%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 53%-**ը**: Հարցին չեն տվել ըստ էության պատասխաններ, այլ ցույց են տվել իրենց ընդհանուր դժգոհությունը ԿԿ համակարգից:
- **Ընդհանուրի** 1%-**ը** կամ **բացասական վերաբերմունք ունեցողների** 8%-**ը**: Չեն կարողացել ձեւակերպել իրենց բացասական վերաբերմունքի պատճառը:

### 3.2.11 Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունները չվտանգվելու հանգամանքին

**Գծապատկեր** 40 - **Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունները չվտանգվելու հանգամանքին**

| | | |
|---|---|---|
| Հարց 35 | → | **Եթե կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը սնանկանա, ապա մասնակիցների խնայողությունները չեն վտանգվում, այլ անցնում են այլ ֆոնդի կառավարիչի: Դա գրավի՞չ հանգամանք է** |

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 65% | 69% | 82% | 72% | 60% |
| Ոչ | 27% | 24% | 13% | 23% | 31% |
| Միեւնույն է | 2% | 1% | 2% | 1% | 2% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 5% | 5% | 3% | 5% | 6% |
| Ընդամենը | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 64% | 67% | 73% | 67% | 69% |
| Ոչ | 31% | 26% | 19% | 27% | 23% |
| Միեւնույն է | 3% | 1% | 1% | 2% | 1% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 2% | 7% | 7% | 4% | 7% |
| Ընդամենը | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների այնքան էլ լավ չեն պատկերացնում, թե ինչ է նշանակում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացում: Նրանց զգալի մասին համար դա ասոցացվում է խնայողությունների կորուստի հետ: Ռեսպոնդենտների 25%-ը, ովքեր նախորդ կառավարչի սնանկացման արդյունքում խնայողությունները այլ ֆոնդի կառավարչի փոխանցելը չեն համարում գրավիչ հանգամանք, կազմում են ԿԿ համակարգին արմատապես դեմ տրամադրված քաղաքացիները: Այս խմբի՝ իրենց վերաբերմունքի հիմնական բացատրությունն այն է, որ իրենք չեն հավատում խնայողությունների փոխանցման սխեմային: Նրանք կարծիքն է՝ **չի կարող պատահել, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը սնանկանա**, **իսկ նրանց կառավարած ակտիվները մնան իրենց տեղում: Այդ կառավարիչները եւ նրանց կառավարած ակտիվները (ամբողջությամբ կամ մի մասը) անհետանալու են միասին:**

### 3.2.12 Վերաբերմունքը մասնակիցների խնայողություններից կատարված ներդրումներից հավելյալ եկամուտի ստացման հանգամանքին

**Գծապատկեր** 41 - **Վերաբերմունքը մասնակիցների խնայողություններից կատարված ներդրումներից հավելյալ եկամտի ստացման հանգամանքին**

| Հարց 36 | → | Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը մասնակիցների կուտակումներից կատարելու է ներդրումներ, որոնք մասնակիցներին ապահովելու են հավելյալ եկամուտ: Դա գրավի՞չ հանգամանք է |
|---|---|---|

Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները



**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 68% | 70% | 77% | 72% | 64% |
| Ոչ | 26% | 24% | 17% | 24% | 28% |
| Միեւնույն է | 2% | 1% | 2% | 1% | 2% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 4% | 5% | 3% | 4% | 5% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 67% | 65% | 76% | 70% | 67% |
| Ոչ | 29% | 27% | 19% | 25% | 25% |
| Միեւնույն է | 3% | 1% | 1% | 2% | 1% |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 1% | 8% | 5% | 2% | 7% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ռեսպոնդենտների 25%-ը բացասաբար է վերաբերվում մասնակիցների խնայողություններից կատարված ներդրումների հաշվին հավելյալ եկամուտ ստանալու հեռանկարին, քանի որ պարզապես չի հավատում դրան:

# 4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

## 4.1 ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### 4.1.1 Տեղեկացվածության մակարդակը

Սոցիալական ծառայությունների բարեփոխումների մասին ռեսպոնդենտների տեղեկացվածության մակարդակին գնահատական տալը շատ դժվար է: Մարդկանց տեղեկացվածության մակարդակի վրա ազդում են հետեւյալ օբյեկտիվ իրողությունները.

ա) **Ամեն մարդ չէ, որ ունի սոցիալական ծառայությունների համակարգի հետ շփման փորձ**: Հնարավոր է, որ բազմաթիվ երիտասարդներ կամ միջին տարիքի անձինք, սոցիալական ծառայությունների կարիքը չունենալու պատճառով, իրենց կյանքում որեւէ անգամ շփված չլինեն այդ համակարգի հետ:

բ) **Ամեն օր չէ, որ մարդիկ շփվում են սոցիալական ծառայությունների համակարգի հետ**: Անգամ այն մարդիկ, ովքեր հանդիսանում են սոցիալական ծառայությունների օգտագործողներ (օրինակ՝ անապահով եւ նպաստառու ընտանիքների անդամներ, հաշմանդամներ, կենսաթոշակառուներ), իրենք եւս համակարգի հետ շփվում են ժամանակ առ ժամանակ՝ ամիսը մեկ անգամ, կամ տարին մեկ անգամ:

գ) **Ամեն տնտեսություն (ընտանիք) չէ, որը տարվա մեջ գոնե մեկ անգամ առնչվում է սոցիալական ծառայությունների համակարգի հետ՝** պայմանավորված այդպիսի ծառայությունների օգտագործման կարիքի իսպառ բացակայությամբ:

Սոցիալական ծառայությունների համակարգի հետ սահմանափակ, անկանոն կամ ոչ հաճախակի շփման փորձը կարող է խոչընդոտ լինել, որպեսզի մարդիկ մտապահեն թեմային վերաբերվող տեղեկատվությունը: Ուստի ստորեւ ներկայացված տվյալներին պետք է վերաբերվել՝ հաշվի առնելով թվարկված հանգամանքները:

**Գծապատկեր** 42 - **Սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների մասին տեղեկացվածության մակարդակը**

| | | |
|---|---|---|
| Հարց 37 | → | **Պետությունը բարեփոխումներ է իրականացնում նաեւ սոցիալական ծառայությունների բնագավառում: Սոցիալական ծառայություն մատուցող պետական կառույցները (այսպես կոչված «Կենսաթոշակայինը», «Սոցապը», «ՓԱՐՈՍ-ը», «Զբաղվածության կենտրոնը», «Բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովը») միավորվում են մեկ կառույցի մեջ, որը կոչվում է Համալիր սոցիալական ծառայությունների կենտրոն: Այդ կենտրոնները գործելու են «Մեկ պատուհան» սկզբունքով: Ինչ-որ բան լսե՞լ եք այդ մասին** |

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**



**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | | Տարիք | | |
|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
| Այո | 24% | 18% | 14% | 20% | 22% |
| Ոչ | 76% | 82% | 86% | 80% | 78% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Այո | 12% | 35% | 14% | 19% | 23% |
| Ոչ | 88% | 66% | 86% | 81% | 77% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Ներկայացված տվյալներից կարեւոր է սոցիալական ծառայությունների բարեփոխումների մասին **Արարատի մարզի ռեսպոնդենտների տեղեկացվածության համեմատաբար բարձր մակարդակը** (35%)։ Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման փորձնական փուլն անցկացվել է Արարատի մարզում։ Առաջին Համալիր սոցիալական ծառայությունների (այսուհետ՝ ՀՍԾ) կենտրոնները բացվել են հենց Արարատի մարզում՝ 1-1.5 տարի ավելի առաջ, քան Երեւանում եւ Կոտայքում։ Ուստի զարմանալի չէ եւ միանգամայն օրինաչափ է, որ Արարատի մարզի ռեսպոնդենտներն ունեն սոցիալական ծառայությունների բարեփոխումների մասին ավելի բարձր տեղեկացվածության մակարդակ։

### 4.1.2 Սոցիալական ծառայությունների բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները

**Գծապատկեր** 43 - **Սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրները**

| Հարց 38 | → | **Որտեղի՞ց եք լսել Հայաստանում իրականացվող սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների մասին** |
|---|---|---|

*! Այս հարցին ռեսպոնդենտները տվել են մեկից ավելի պատասխաններ*

**Բոլոր ռեսպոնդենտների պատասխանները**




**Ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի, տարիքի, տարածքների եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | Սեռ | Տարիք |
|---|---|---|

| | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 |
|---|---|---|---|---|---|
| Ծանոթներից, բարեկամներից, ընկերներից, գործընկերներից | 62% | 56% | 71% | 62% | 54% |
| Հեռուստատեսությունից | 31% | 42% | 21% | 35% | 42% |
| ՀՍԾ կենտրոնների հետ ունեցած շփումներից | 5% | 9% | 4% | 7% | 7% |
| Ինտերնետից | 6% | 2% | 4% | 2% | 5% |
| Եղել են տեղում | 2% | 3% | 4% | 2% | 2% |
| Տպագիր մամուլից | 2% | 1% | - | 2% | 2% |
| Չեն հիշում / դժվարացել են պատասխանել | 2% | 1% | 8% | 1% | - |

| Պատասխաններ | Տարածքներ | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|
| | Երեւան | Արարատ | Կոտայք | Քաղաք | Գյուղ |
| Ծանոթներից, բարեկամներից, ընկերներից, գործընկերներից | 33% | 82% | 25% | 51% | 69% |
| Հեռուստատեսությունից | 55% | 21% | 61% | 44% | 28% |
| ՀՍԾ կենտրոնների հետ ունեցած շփումներից | - | 9% | 9% | 7% | 7% |
| Ինտերնետից | 8% | - | 9% | 7% | - |
| Եղել են տեղում | 6% | 1% | 2% | 3% | 2% |
| Տպագիր մամուլից | 4% | 1% | 2% | 3% | - |
| Չեն հիշում / դժվարացել են պատասխանել | 2% | 1% | - | 1% | 1% |

Հարցը տրվել է ռեսպոնդենտների 20%-ին, ովքեր լսել են, որ Հայաստանում իրականացվում են սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումներ (տես **Գծապատկեր** 42): Բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուրների մեջ ամենից հաճախ հանդիպել է «գործընկերներից, աշխատանքի վայրից» պատասխանը (43%): Պատասխանների՝ ըստ տարածքների եւ բնակավայրի տիպի վիճակագրությունը ցույց է տալիս, որ «գործընկերներից, աշխատանքի վայրից» պատասխանի բարձր ցուցանիշն ապահովվել է **Արարատի մարզերի գյուղերի ռեսպոնդենտների հաշվին**: Տեղեկատվության անբավարարության պատճառով դժվար է բացատրել այս երեւույթի պատճառը, սակայն փաստ է, որ Արարատի մարզի գյուղերում Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի մասին տեղեկատվությունը ինտենսիվ զրույցների թեմա է եղել:

## 4.2 ՌԵՍՊՈՆԴԵՆՏՆԵՐԻ՝ ՀՍԾ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ ՍՏԱՑԱԾ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՍԾ կենտրոնների հետ անմիջական առնչություն ունեցած ռեսպոնդենտների թիվը շատ մեծ չէ: Այն կազմում է ընդհանուր ռեսպոնդենտների թվի 4%-ը: Այդ ցուցանիշն էլ ապահովվել է հիմնականում Արարատի մարզի հաշվին, որտեղ ռեսպոնդենտների 9%-ը հայտարարել են, որ առնվազն մեկ անգամ այցելել են ՀՍԾ կենտրոն:

Բացարձակ թվերով ՀՍԾ կենտրոններ այցելած ռեսպոնդենտների թիվը կազմել է 46 ռեսպոնդենտ, որից՝

- ըստ սեռի՝ 16 տղամարդ եւ 30 կին
- ըստ տարածքների՝ 9-ը Երեւանից եւ 37-ը Արարատի մարզից
- ըստ բնակավայրի տիպի՝ 27-ը քաղաքներից, 19-ը գյուղերից:

Նման փոքր թվով ռեսպոնդենտների պատասխանների հիման ՀՍԾ կենտրոնների գործունեության հիման վրա դատողություններ անելը թերեւս հիմնավոր չի լինի: Ուստի Խորհրդատուն կբավարարվի միայն այս ռեսպոնդենտների առաջին տպավորությունների ամփոփմամբ:

Նշված 46 ռեսպոնդենտներից ՀՍԾ կենտրոն իրենց այցից կարծիքներ եւ տպավորություններ հայտնել են 38-ը, ընդ որում՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական: 38 ռեսպոնդենտներից ստացված արձագանքները հետեւյալն են.

**<u>Դրական արձագանքներ հայտնել են 37 ռեսպոնդենտ, որից՝</u>**

- 13 **ռեսպոնդենտ** նշել են, որ **բարձրացել է սպասարկման արագությունը**:
- 10 **ռեսպոնդենտ** նշել են, որ սոցիալական ծառայությունների կենտրոններն արդեն **նորոգված են** եւ համապատասխան **կահավորված**:
- 6 **ռեսպոնդենտ** նշել են, որ զգալիորեն **բարձրացել է սպասարկման որակը**: Աշխատակիցները բարեհամբույր են, քաշքշուկներ չեն ստեղծում:
- 3 **ռեսպոնդենտ** նշել են, որ **սպասարկումը դարձել է կենտրոնացված**, բոլոր հարցերը լուծվում են նույն տեղում, ինչը խնայում է ժամանակ եւ նյարդեր:
- 8 **ռեսպոնդենտ** տվել են **ընդհանուր բնույթի դրական պատասխաններ** (օրինակ՝ «ամեն ինչ լավ էր»)՝ առանց կոնկրետացնելու, թե հատկապես ինչը:

**<u>Բացասական արձագանքներ հայտնել են 12 ռեսպոնդենտ, որից՝</u>**

- 7 **ռեսպոնդենտ** նշել են, որ **սպասարկման որակը ցածր է** եւ որպես պատճառ են նշում աշխատակիցների դանդաղկոտությունը, տեղում չլինելը, քաշքշուկներ ստեղծելը, սպասարկման սրահի փոքր չափերը:
- 4 **ռեսպոնդենտ** նշել են, որ **կաշառակերությունը ինչպես կար**, **այնպես էլ մնում է**:

## 4.3 ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ՀՍԾ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս հարցը դիտարկվել է միայն Կոտայքի մարզի ռեսպոնդենտների հետ, քանի որ այս մարզում ոչ ոք ՀՍԾ կենտրոնների հետ շփման փորձ չուներ:

**Գծապատկեր 44 - Կոտայքի մարզի ռեսպոնդենտների սպասումները եւ ակնկալիքները ՀՍԾ կենտրոնների գործունեությունից**

| Հարց 39 | → | **Արդյո՞ք ՀՍԾ կենտրոնների գործունեությունը կարո՞ղ է հանգեցնել հետեւյալ արդյունքներին.**<br>▸ *Կնպաստի սոցիալական ծառայությունների որակի բարձրացմանը*<br>▸ *Զգալիորեն կնվազեցնի բյուրոկրատական քաշքշուկը եւ ժամանակ կխնայի*<br>▸ *Դա կնվազեցնի/կվերացնի կաշառակերությունը*<br>▸ *Դա կնպաստի շահառուների խնդիրների ավելի արագ եւ օպերատիվ լուծմանը* |
|---|---|---|

**Կոտայքի մարզի ռեսպոնդենտների պատասխանները**




**Կոտայքի մարզի ռեսպոնդենտների պատասխաններն ըստ սեռի եւ բնակավայրի տիպի**

| Պատասխաններ | | Սեռ | | Տարիք | | | Բնակավայրի տիպ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արական | Իգական | 18-24 | 25-40 | 41-62 | Քաղաք | Գյուղ |
| Կնպաստի սոցիալական | ▸ | 54% | 44% | 57% | 50% | 43% | 48% | 47% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ծառայությունների որակի բարձրացմանը | | | | | | | |
| Զգալիորեն կնվազեցնի բյուրոկրատական քաշքշուկը եւ ժամանակ կխնայի | 68% | 73% | 78% | 75% | 66% | 73% | 69% |
| Կնվազեցնի/կվերացնի կաշառակերությունը | 25% | 21% | 24% | 23% | 21% | 22% | 22% |
| Կնպաստի շահառուների խնդիրների ավելի արագ եւ օպերատիվ լուծմանը | 73% | 65% | 76% | 70% | 63% | 70% | 64% |
| **Ընդամենը** | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

Կոտայքի մարզի ռեսպոնդենտների պատասխաններից կարելի է նկատել, որ նրանք, դեռեւս առնչություն չունենալով ՀՍԾ կենտրոնների հետ, դրանց գործունեությունից ունեն ընդհանուր առմամբ դրական սպասումներ եւ ակնկալիքներ: **Միակ հարցը**, **որտեղ ռեսպոնդենտների մեծամասնությունը չի հավատում փոփոխություններին**, **դա կաշառակերության նվազման կամ վերացման հեռանկարն է**:

# 5 ԱՄՓՈՓՈՒՄ

**Աղյուսակ 8 - Կենսաթոշակային եւ սոցիալական ծառայությունների համակարգերի բարեփոխումների մասին տեղեկացվածության եւ վերաբերմունքի ելակետային ցուցանիշները**

| | |
|---|---|
| **I. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ** | |
| **ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ** | |
| 1. Տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին | 86% |
| 2. Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների մասին | 10% |
| **Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգ** | |
| 3. Տեղեկացվածությունը պարտադիր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին | 44% |
| 4. Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի պարտադիր մասնակիցների մասին | 8% |
| 5. Տեղեկացվածությունը պարտադիր ԿԿ համակարգին վճարող սուբյեկտների մասին | 16% |
| 6. Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային վճարների չափի մասին | 4% |
| 7. Տեղեկացվածությունը անհատական կենսաթոշակային հաշիվների մասին | 5% |
| 8. Տեղեկացվածությունը Կենտրոնական Դեպոզիտարիայի դերակատարության մասին | 2% |
| 9. Տեղեկացվածությունը կենսաթոշակ. խնայողությունների կառավարիչների մասին | 8% |
| 10. Տեղեկացվածությունը կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու կարգի մասին | 1.4% |
| 11. Տեղեկացվածությունը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ չընտրելու հետեւանքների մասին | 4% |
| 12. Տեղեկացվածությունը կենսաթոշակային խնայողությունների ժառանգման մասին | 41% |
| 13. Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդը/ֆոնդի կառավարիչին փոխելու հնարավորության մասին | 30% |
| 14. Տեղեկացվածությունը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունների անվտանգության մասին | 28% |
| 15. Տեղեկացվածությունը մասնակիցների՝ իրենց խնայողությունների հաշվին կատարված ներդրումներից հավելյալ եկամուտ ստանալու հնարավորության մասին | 29% |
| **Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգ** | |
| 16. Տեղեկացվածությունը կամավոր ԿԿ համակարգի ներդրման ժամկետի մասին | 2% |
| 17. Տեղեկացվածությունը ԿԿ համակարգի կամավոր մասնակիցների մասին | 7% |
| 18. Տեղեկացվածությունը կամավոր ԿԿ համակարգին վճարող սուբյեկտների մասին | 10% |
| 19. Տեղեկացվածությունը պարտադիր կուտակային վճարների չափի մասին | 4% |
| 20. Տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային ծառայություններ մատուցող կառույցների մասին | 6% |
| 21. Տեղեկացվածությունը կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների համար սահմանված հարկային արտոնության մասին | 2% |
| **ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ (ԴՐԱԿԱՆ)** | |
| 22. Վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ | 18% |
| 23. Վերաբերմունքը ԿԿ համակարգի ներդրման սկզբունքների նկատմամբ | 33% |
| 24. Վերաբերմունքը ԿԿ համակարգի պարտադիր կիրառման նկատմամբ | 26% |
| 25. Վերաբերմունքը ԿԿ համակարգն առանձին տարիքային խմբի համար պարտադիր սահմանելու նկատմամբ | 28% |
| 26. Վերաբերմունքը պարտադիր ԿԿ համակարգին վճարում կատարողների նկատմամբ | 61% |
| 27. Վերաբերմունքը պարտադիր կուտակային վճարների չափի վերաբերյալ | 10% |

| | |
|---|---|
| 28. Վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշիվ բացելու, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ եւ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ | 73% |
| 29. Վերաբերմունքը հատուկ համակարգչային ծրագրի օգնությամբ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ կամ ֆոնդ ընտրելու կարգի նկատմամբ | 53% |
| 30. Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների մասնաբաժինը, ովքեր կենսաթոշակային ֆոնդում իրենց կենսաթոշակային խնայողությունների չափով իրենց համարում են ֆոնդի փայատեր | 38% |
| 31. Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ ունեցած վստահությունը | 33% |
| 32. Վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ ֆոնդը փոխելու հնարավորության նկատմամբ | 78% |
| 33. Պարտադիր ԿԿ համակարգի մասնակիցների մասնաբաժինը, ովքեր համարում են, որ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացման պարագայում մասնակիցների խնայողությունները չեն վտանգվում, այլ փոխանցվում են մեկ ուրիշ կառավարչի | 68% |
| 34. Վերաբերմունքը մասնակիցների խնայողություններից կատարված ներդրումներից հավելյալ եկամտի ստացման հանգամանքին | 69% |
| **II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ** | |
| 35. Տեղեկացվածությունը սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների մասին | 20% |
| 36. Հետազոտության պահի դրությամբ ՀՍԾ կենտրոններ այցելած ռեսպոնդենտների մասնաբաժինը | 4% |
| 37. Ռեսպոնդենտների մասնաբաժինը, ովքեր ՀՍԾ կենտրոններ այցելելուց հետո ստացել են դրական տպավորություններ | 37/46 |
| 38. Ռեսպոնդենտների մասնաբաժինը, ովքեր ՀՍԾ կենտրոններ այցելելուց հետո ստացել են բացասական տպավորություններ | 12/46 |
| 39. Ռեսպոնդենտների մասնաբաժինը, ովքեր հավատում են, որ ՀՍԾ կենտրոնների գործունեությունը կնպաստի սոցիալական ծառայությունների որակի բարձրացմանը | 48% |
| 40. Ռեսպոնդենտների մասնաբաժինը, ովքեր հավատում են, որ ՀՍԾ կենտրոնների գործունեությունը զգալիորեն կնվազեցնի բյուրոկրատական քաշքշուկը եւ ժամանակ կխնայի | 71% |
| 41. Ռեսպոնդենտների մասնաբաժինը, ովքեր հավատում են, որ ՀՍԾ կենտրոնների գործունեությունը կնվազեցնի/կվերացնի կաշառակերությունը | 22% |
| 42. Ռեսպոնդենտների մասնաբաժինը, ովքեր հավատում են, որ ՀՍԾ կենտրոնների գործունեությունը կնպաստի շահառուների խնդիրների ավելի արագ եւ օպերատիվ լուծմանը | 68% |